



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

1-909

3667


31.99-8

L-61



Dynd

ՀԱԿՈՎՐԾԵՐ



2002

ՀԱՐՄ.
4-2562

ԹՈՅՑԿԱՔԻՆ Ե ԿՈՎԿԱՍԻ ՈԽՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀՐՁԱՆԱՀՈԳՄԱՆԱՐՁՈՒՔ ՈՐԴԵՍ
ԴԱՍԱԳԻՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐՐՈՒԿԱՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈՄԱՐ.

491.99-8

հ-61

ԼՈՒՍԱԲԵՐ


Ա. ՏԱՐԻ

ԱՅՐԲԵՆԱՐԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑԻՆ

Ա. ԼԻՍԻՑԵԱՆ, ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և Լ. ՇԱՆԹ

ՊՈ.ՏԿԵՐՈՉԱՐԴԵՑ
Վ. ԱԽԻԿԵԱՆ



3-րդ ՏԻՊ

Եթ ինքնուրոյն եւ փոխաղբած յօդածների, ինչպէս եւ մնր նկարների
արտատպովթեան իրաւունքը վերապահած է

2010

14363


ՊԻՖԻՒ
ԷԼԵՔՏՐԱԿԱՐԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵՍՆՅԻ. ՊՈԼԻ, 7
1909

Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն



մ

մ մ մ



մ մ ր


մ մ մ, մ մ ր, մ ր մ

կ մ ր մ ր մ




կ մ ր մ մ






қашу



қашу, қашр

қаша, қашын

қашың қашың қашың



қашхы

арх, ахрх

ахрх-ахрх

әхр, әхрх, әхрх



қашх, ахр қашх

арх, қашх қашр ахр



ұшың, ұшың

ұшыңғұ, ұшыңғұ

ұшың ұшың, ұшың ұшың

ұшыңғ, ұшың ұшыңғ

әнүр



әнү, әнү, әнү

әнү, әнү, әнү

әнү, әнү, әнү

әнү әнү әнү әнү

әнү әнү әнү әнү

әнү әнү әнү әнү



Տնօ՞ւ

Դուս եռուիր, պող, կուր
 Թի պուրակ կորդուր
 պարի զավեարմիր մորի
 Թի պուկի, կորի



ԿՈՒԿ

Եար, յոր, աստր
 Եարի, Թի աստրի
 Թի միւ զամ, գար պարի
 Կորի, շակուր, Թի շակի




Ամանկ

Թի աման պանիր
 պառն, դրեիին
 Խալիկասարի նոհեանին
 նաևի, նաևի, իւիկ նաևի




ԳՐԱՆԿ

Թի մասրակ նոյնիր
 ա պրայիկ, թի կումբան
 դեւրիկ արա, մուրիկ արա
 գրելոր պրայրիկը կը մքրիք



նաւակ



գրաւոր, աշանավ

տիեզերի առանձին գույքը լուս
միջնիւրացամբ իրի կողոքը պարագաւ,
կրնակը լաւ պարի պրաւ



ուշ

մայրաւորանոնին

կույր գույր կույր գույր
կարուն պատիկի կուսին
կուսին ասաւ «կու-կու, կու-կու»



Ա "

Ա "

Ա

Կ

Լ

Վ

Ը

Ռ "

Ր


Կ

Բ

Ր

Հ

Ո



ասա, արա, տատիկ, պապիկ.

տոպրակը տար կարի.

մի աման կարմիր սալոր.

կիրակի պըստիկին տար սարը.

լորեկը տապ արաւ արտում.

պատի տակ մի նապաստակ.

պարանը տամ, ուլիկը կապի.

մուկը ընկաւ կարասը.

լակոտը մըտաւ իր տընակը.

տատիկը միս տապակի,

պապիկը նըստի ուտի.

կատուն՝ միառւ, միառւ,

ուլիկ՝ մըկըկէք, մըկըկէք.



Երկու իւակ է

երկու ելակ է

երկիր, երկար, երկան, ելարան
մի աման ելակ.
լուսինը ելաւ.
իմ մըկրատը ետ տուր.
երանի մատիտըս սուր լինի.
կատուն ելաւ լուսամուտը.



Կապիկը Երեար պար իւս



Վկյուպիկ է

մէկ կոպէկ է

տէր, տէրտէր, տանուտէր, կէտ, կէս, սէր.

մուր էիր երէկ իրիկուն.
մէկ էսպէս է ասում, մէկ էնպէս,
էսպէս էլ սուտասան.




իմ տիկնիկը սիրուն է,
իր նանիկին սիրում է.

Տա բուպիկս



Նետ

էս տետրակը մւմն է.
պըստիկը երեսը մըրոտել է.
աւելը ընկել է նըստարանի տակ.
մեր լապտերի ապակին կարկուտը
կոտրել է.




կատուն սերը կերաւ.



Ռնկուռա ինը գալիքիանէ


եւ-է

տատը և պապը. ես և նա.
տարի և ամիս. սանըր և սապոն.




արելը մըտաւ սարի ետելը.
տերեների տակ սերկեիլ է երեսւմ.
սեռուկ ուլիկ, արի տերեւ կեր.

տես, արելը մէր է մըտել,
ու եկել է իրիկուն,
արտուտն արտում տապ է արել,
նանիկ արել և կըկուն.



սիրելի տատիկ, տես, էս մըկրատը ես
եմ նըկարել.



Մասիս սարը

Թ ա

Ա րամ, Ա րամ, Ա րամ:

Ա ռ

Ա րամ, Ա րենա, Ա րեն:

Վ ո

Վ արիամ, Վ արիամ, Վ արիամ:

Ս ո Սիրուն արե, ել, ել:

Ա ա Ամպերը կորան: Արել ելաւ:

Մ մ Մարկոսն էլ լըւանում է երեսը:

Ասատուր, ասա՝ տուր:

Մուկն ու մանուկը

Մի սիրուն մուկ մըտաւ նըստարանի տակ:

—Մուկը, մուկը, նանի, ասաւ մանուկը:

Մըկանը կատուն կալաւ, տարաւ:

—Մուկը, իմ լաւ մուկը, նանի,

տուր իմ մուկը, —ըսկըսաւ լու

մանուկը:



Ե կ Եսրասիր, Եսրասիրիչ
Ծ ա Եցիորու, Եսրասիրան
Ը մ Եթիրան, Եթիրան


Կ կ Կըրակ արա ու միսը տապակի:
Կատուն միսը տարաւ:

Պ պ Պըտիկ Մարիամը մի պըտիկ
սանըր ունէր: Անպիտան Պետրոսը
սանրի ատամը կոտրել է:

Տ տ Տիրանը սաստիկ լալիս էր:
Տիկինը նըրան տարաւ տուն:



Սիրամիտ Սուրենը



ուրէնը մէկ կոպէկ է տանում կըրպակ
ու ասում.

—Մէկ լաւ մըտրակ տուր, երկու կարմիր
մատիտ տուր, մէկ երկար պարան տուր,
մէկ սիրուն տիկնիկ տուր, կէս կոպէկ
էլ ետ տուր:

ն ն նունիկ, նորովա

տ ի եւա, եւրոպա

բ բ բայլ բայլ


Ն ն նամակը տուր նունիկին:

Նա էլ տանի նանիկին:


Ե Ե Եւա, լաւ մըտիկ տուր:
Երկու ուլիկներ ելան
կտուրը:

Է Է Էս նըկարը նոր-Տարուն
պապիս նըւէր պիտի
տամ:

Էնպէս պիտի սիրի:



Պրատիկ նապաստակը



Կար մի սիրուն պըստիկ նապաստակ:
Նըրա մարիկը կորաւ:
Նա ման եկաւ արտում, ման եկաւ
երկար, ու իրիկունը տըրտում եկաւ
մըտաւ մասրու տակ:



ս ս ս

հ

ի ի ի

մեխ, խակ, մեխակ. սոխ, խակ, սոխակ.

Արտիկ, եկ տախտակին, մի մորեխ նըկարի:

Սիրանը խըտըտել է իր տիկնիկին ու խրատ է
տալիս. «խակ-խակ սալոր մի ուտի, խոնաւ
խոտերին մի նըստի»:

երիկան սիր ուզում:



ի ի

յուսոյիս




ի ի

յուրին


Ըլխուր իսակը

Ուրախ Միսակը

Ի ի իստակ կարի, իստակ նըկարի,
իսկի պարապ մի մնա:



Խ խ Խոնաւ իրիկուն է:
Խընամին տըրեխները կախ է
արել մեխին:



արօլ Օ Օ

օր, օրօր, օրօրան, օրինակ,
արօտ, կարօտ.

Մեր տան մօտ սիրուն արօտ է:
Տես, էս սանրի ատամները՝ կէսը նօսը են, կէսը խիտ:
կարօն էսօր օրինաւոր նըկարել է:

Արտի ակօսում,
Էն խոր ակօսում,
Երկու լոր ուրախ
իրար մօտ նըստել,
Փ-ըի-լի, լի, լի,
ասում են խօսում,
Էն խոր ակօսում:


Թօն օրիր մօդինում ին:

Օնանը սաստիկ կարօտել է իր մօրը:
Օտարական, արի մեր տուն:



Օրօր

Օրօր, օրօր, իմ սիրունիկ,
օրօր ասեմ ու նանաս.
Երկար ապրես, կարմիր օրեր,
կարմիր արև ունենաս:



գ ո մ գ գ


գինի, գերի, գարի, գըրի,
Եւզինէն նըստել գիր է
գըրում: Մի խանգարի:

Պետրոս, էտ մւմ գօտին է գետնին:

15/4-67


Սագերը լընգ-լընգ,
գընում են գետակ,
գընում են լանան

գըլուխն ըսպիտակ,
մարմինն ըսպիտակ
ու ետ գան խտակ:




Մարդին զայխ ի զարուն:

Արագիլն ու գորտը



Արագիլը մի գորտ կուլ տըւաւ:
Մէկէլ գորտը էս տեսաւ ու արագ
մըտաւ գերանի տակ:
— Միրուն գիրուկ, ուր ես գը-
նում,— ասաւ արագիլը. — արի,
լաւ լուր ունեմ ասելու:
— Իմանում եմ, ընկերիս ասիր.—
ասաւ գորտը ու աւելի ամուր մըտաւ գերանի տակ:






դանակ
գըղալ

Դ

Դ Դ

Կըտրեմ, կըտրեմ, դէն դընեմ,—ասաւ դանակը:
Տանեմ տամ ու ետ գամ,—ասաւ գըղալը:



Ախ, դու կատու, սիրուն կատու, ուր
ես գըղորում իմ գընդակը:

Մեղքակի գըլխարկը կորել էր. դուրս եկաւ՝ դրել
էր դարակը:

Մեր դասարանը գըրադարանի դէմուզէմն է:
Արի, գընում եմ ման գալու. արև օր է, դուր է
դալիս:

Մրնգուկը զապարի ։



Պարոն գըղակը

—Ես էլ եմ պարոն, ասաւ մանուկը.
պապի գըղակը դրաւ ու գընում էր:
Գընալիս պապը տեսաւ ու ասաւ.
—Է՛ պարոն գըղակ, ուր ես տանում
ետ պըստիկին:



բաւ

Բ

Բ Բ

բու, բուն, բադ, բան, բեր, բերան,
բըլուր, բըլուտ, բամբակ, բիբ.

լոբին ու բակլան լաւ են պասին,
ուտիսին՝ գընա մըսին.

Միլ բազիլ իլրան լորին:

Մըմբատ, բանալին բեր:

Մեպտեմբերին ուսումը ըսկըսուում է:

Մեր բակում բանւորները բանում են.

գընա ասա՝ բաւական է:

Արագիլը բուն է դըրել բարդու գըլխին:


Տերեւները ընկնում են

Տերեւները գունատւել էին. Տըխուր
կախ էիր ընկել, մըտիկ էին անում
գետնին ու սըւսըւում էին.

«Մըխում եմ, մըխում եմ»:


Մէկիկ-մէկիկ պոկ էին գալիս, տարուբերում էին
օդում ու ընկնում խոնաւ գետնին:





կ ո վ Վ

Կարմիր վարդ. վախկոտ նապաստակ:
Մեր կովը մոռ-մոռ անելով տուն է գալիս:
Էս վարունկը ով է կերել:
Սոխակը երգում է վանդակում:
Խոսրովը լաւ է սովորում:
Էս ըսպիտակ վրաններում ով է կենում:



Միջին ջրարկութիւն:

ով, սով, սովոր, բով, կով, գովել, վախով, սըրտով
վարդ | վեր | վան | վար |
նըւարդ | նըւեր | սաւան | տաւար |



Խոսրովի նրկարը

Խոսրովը պատի վըրա մարդ է նրկարում: Նախ մի կըլոր գընդակ.
Վլան լէն բերանով մի լուսին: Գընդակի տակին երկու երկար արագիլ տոտիկներ. վերևն էլ մի մի բարակ գերան ամեն մի ուսին:
Եւ պատի վըրա, տես, կանգնել է մարդը ու խընդալով մըտիկ է անում Խոսրովին:

Ջ Ջուրգին, Ջարդին
Շ Շանին, Շերինիկ
Բ Բարենին, Բազրայր

Գ Գասպարը գեր է գըրում:
Գըրելիս գըրուխըդ մի կախի, Գասպար:
Դերենիկ, մատիտը դու մի սըրի: Դանակի բերանը սուր է, մատըդ կը կըտրես:
Դէսը տուր, ես կը սըրեմ:

Բ Բուն բընակւում էր աւերակներում:
— Բարե, բու բարեկամ:
— Բարի, բարի, մենակ իմ բունին էտպէս մի մօտենալ:



Բ ա դ ի կ

Բաղիկ, բաղիկ,
Էտ ուր բարով,
Էտ կաս-կարմիր
նոր սօլերով,
տոտիկ, տոտիկ,
Էտ ուր բարով:



ՈՐԱԿԱՆԸ

Միս ու ոսկոր:
Ամպը որոտում է:
Ես մի ոտանաւոր գիտեմ անգիր:
Ես որ պապիկի պէս լինեմ, բեխերը
Էսպէս պիտի ոլորեմ:



Բ Պոկի Մայրանի:

Ոլոր-մոլոր գալիս է վրտակը:
Ոտնամանըս հի է տարել, ասում է անկարգ մա-
նուկը վեր կենալիս:

Սըրտոտ որսկանը

—Նանի, նանի, կըրակ արա, որսի եմ գընում,
ասում է պըստիկ Ոսկանը. վեր է կախում իր նետն
ու պարսատիկը ու գնում բոստանն: Բոստանում կանգ-
նել վարունկ էր ուտում: Մին էլ մի նապաստակ
գուրս է գալիս ոստոս-
տելով, դէմը կանգնում:

Մեր որսկանը պօւկ,
դէպի տուն, իսկ նե-
տերն ու պարսատիկը
մընում են գետնին:



Ե 2

2

Ուշ, նուշ, անուշ, Սիրանուշ:
Արշակ, ըշտապի ուսումնարան:

Վ Վիշի անուշ զինի:

Աշխէնի գըրպանում շարունակ նուշ է լինում:
Սպիտակ շուշան, կապուտակ մանուշակ մեր դաշ-
տերում շատ. գնա պոկի:
Կօշիկը տար կօշկակարին, որ կօշկակարը կօշիկը
կարի:

Ե Եռուիկ, յեռն:

Բ Բնիկորս իիի է:

Շ Շուշի, Շուշանիկ:

Լ 1 Լուսինը ելաւ: Լաւ գիշեր է:
Ընկերըս ու Արտաշէսը միասին են կարգում:
Ընտիր աշակերտ է Արտաշէսը:
Շապիկըս մաշել է:
Շունը, էշն ու գոմէշը ապրում են մեր բակում:



մաղ

η

դ ՛ շ

Մուշեղն ու Աղասին վէգ էին խաղում։


Խորիո գրի ու ցողի վրա։

Դեղը սեղանի վրա է անկողնի մօտ։

Գող՝ սիրտը դող։

Ասեղը հրտեղ ես դրել, Աստղիկ։

Մեղուն մեղը է շինում։



Աղունակը՝ ղըւ-ղըւ.

Պրստի տըղան՝ աղըւ-աղու։


Աշուն

Աշունը եկել է. գիշերը երկարել։ Ամպն ու մշուշը
պատել են երկիրը։ Տերևները
դեղնել են. Դաշտերը սևին են
տալիս։



Աղմուկն ու աղաղակը դա-
դարել է արտերում։

Շարան-շարան արագիլները
գլուխում են ուրիշ երկիրներ։



ջուր

ջ

ջ ՛ շ

Արևի շողերը ընկան նընջարան։

Մանուշ ջան, ել, երեսրդ ու
ականջները լրւա, շուտ արա։

Սըմբատը ընկաւ եղինջի մէջ,
երեսը մըրմընջում է։

Հայոցք գրնջիու գոկ-գոկ գրի։

Կենդանիներին տանջում են վատ երեխաները։

Վ վասակ, վարսինիկ

Ռ ռուխս, ռարսալ

Ջ ջայալ, ջաւօ

Վ վարդանը խըել է վարդգէսի
վէգերը։ Վարդգէսը լալիս է։ Վատ
ես, վարդան։

Ղ ղ Ղեռնդը լաւ լող է տալիս։

Զ զ Զըրկիր Մըկօն խուլ ու մունչ է։
Զանասէր մեղուն աշխատում
է ջերմ արևի տակ։





բ ը գ է զ

զ

շ ւ

Եզը պողով դէզը տակնուվըրա է արել:
Կատուն իր երկար լեզով լիզում էր մազերը:

Մինչու մրցին զանգ ին խայթի:

Մեր Ազնիւը արդէն ազատ խօսում է ու վազվըզում:

Շըները գազազել են ու իրար գըզգըզում են:

Մեր պարտէզում զանազան աղնիւ պըտուղներ կան:


Ոզնին խաղող շատ է սիրում:

Տես, զինւորները գընում են պքունելու:




Անկարգ Պօղուր


Պօղուր ուշ է վեր կենում և ասում: Ուր

են  -ըս, հվ է տարել  -ըս

Ու բորիկ  -ով դէս ու զէն է ընկնում

 -ը  -ի ետեն է,  -ը

Վրա: Իսկ  -ը բոլորովին կորել է:



Հ ո ւ ս ո չ լ ս ա ր

շ

Մինչև չաշխատես, բան չես
սովորի:

Մաշիկին յիրու չամիչ պոր:



Տանուտէր Խէշանը չիբուխը բերնին ման
է գալիս գեղամիջին:

Սուտի պոչը երկար է:

Լուսիկը շուտ-շուտ պաշում է իր շան
գունչը. լաւ չի անում. ինչու:

Վարպետը խրատում էր իր աշակերտին.
«Ես ինչ է. ամբողջ օրը կորչում ես, ոչ
մի բանի չես կըպչում. չես ամաչում»:

Ուղտին ասին. «Ինչու վիզըդ ուղիղ չի». ասաւ.
«Ինչըս է ուղիղ, որ վիզըս ուղիղ լինի»:

Աղա Մինաս,
լաւ իմանաս,—
ուր որ զընաս,
շատ չը մնաս:

Էն ինչ է ինչ. ասում եմ՝ «արի, արի»—չի գալիս,
ասում եմ՝ «գալ մի», գալ մի»,—գալիս է:

Տղան գընում էր կըրպակ գընդակ գընելու
Տղան գնում էր կըրպակ գնդակ գնելու

Երեսդ մըտեղ ես մըտել. գնա, լւա:

Գլուխս մըսում է, գդակս բեր:

Մեր Մկրտիչը նստել է, մի բան է գրում ու ջնջում:

Վարդանը վաղը մնալու է տանը:

Ամպերը կուտակւում են, արևը կորաւ, եղանակը
վատանալու է:

Վարսենիկը շուտ է կեղտոտում իր շորերը:

Ընկերս աշխատասէր և Ընդունակ աշակերտ է:

Ամեն մարդ իր նմանին է ընկեր ընտրում:

Սարի մարդիկ դաշտի օդին շուտ չեն ընտելանում:

Զ Զար աղջիկ:


Հ Հային, Հարի:

Զալ շունը պարտիզանի
չուստերը տարել է:

Զաշանակ տղան անվերջ
խօսում է:

Զատկին մեր ազգականները
լինում են մեզ մօտ:

Երևանի միջով վազում է
Զանդի գետը:



սայլ

J

Ո՞րն է մեր մայրենի լեզուն:

Մայրս ու եղբայրներս վաղը գնալու են այգի:
Վայ, մայրիկ, տես, սարդը ոստայն է կապել:

Ժայլը վայրինի կինդանինի:

Կը գան, գնում եմ կայարան.—Այն, գալիս եմ:

Նոյեմբերին վերջանում է աշունը:

Այս կինը որբեայրի է:

Տես, պայտը վայր է ընկել:



Չար Եղօն ու իր եղբայրը



Էյ, գտել եմ, մոշեմ գտել,

Ուր է, մւր է:

Այ, տես, այգում:

Բաս տէրը:


Զի երկում:

Օխայ, բնչ լաւ է:

Վայ, շունը, շունը եկաւ:

Վայ, մայրիկ ջան, ոտս,
ոտս:

Վնւյ, վնւյ, վնւյ:



Դ Ա Լ

Ո |

Մի կին երկու դոյլ ուսին՝ գնում էր գետը:
Կապոյտ մանուշակը անուշ բոյր ունի:
Զուրը գոյն չունի:

Բոյրի լոյն ին սիրու.

Մի ողկոյզ խաղող:
Աշակերտները զոյգ-զոյգ գնում էին
պտոյտի:
Երեխաները ընկոյզ էին խաղում:
Արշալոյսը ամպերը ներկում է:



մատնոց


Զ

Հ Հ

Պապս ակնոցը սեղանից վայր գցեց, կոտրեց:
Մուկը բունը չէր մտնում, ցախաւելն էլ պոչից կապեցին:

Երամին ցաւը անցաւ.

Աշակերտները դպրոցից դուրս եկան ու ցիրուցան
գնացին իրանց տները:
Էջ որ մի տեղ ցեխ ընկաւ, էլ էնտեղով չի անցնի:
Աղջիք, ցոյց տուր, գոգնոցով ինչ ես տանում:



հինգ հաւ

Հ

Հ Հ

Վահանը հիւանդ է, նիհարել է:
Սահակը իր հօր հետ մեր հա-
րևանի տանն է:

Նոր հովանոցս մայրս պահել է պահարանում:

Օգոստոսին իոնք հասնու.

Գոհարիկը իսկի հանգիստ չի մնում,
շարունակ խանգարում է իր ընկերուհինե-
րին:

Աբրահամի համար հայրս մի հոլ է գնել:



Նին ու ննջում է:

—Պետիկ ջան, ինչու դասդ չես սովորում,—հարց-
րեց մայրը:

—Վերջակէտի եմ հասել, մայրիկ, —պատաս-
խանեց Պետիկը: —Ուսուցիչն ասաւ՝ երբ վեր-
ջակէտի հասնես, հանգստացի՛:





Յ Պ Ա Պ Ո Վ

Ամեն օր յիմարի համար Զատիկ է:
Որդի, հանգիստ խաղա, կը յոգնես:
Մեր տունը երկու յարկանի է ու
շատ յարմար:

Զեմ յիշում, յունիսին էր կամ յուլի-
սին, մեր կողմերում մի գայլ յայտնւեց:

Եթի նարի յարտիքին.

յոյս—անյոյս. յարմար—անյարմար. յատակ—անյա-
տակ, յայտնի—անյայտ.

Յ Սովորի

Ի հայասպան

Ճ Ճուսիկ, Ճամիկ

Ց Ցող է նստել խոտերին.
Ցախ բե՛ր, կրակ արա:

Հ Հուզ տու—կուլ տու:
Հովիւը հանդում մահակը
ուսին ոչխար է պահում
Յ Յիմարի վրա յոյս մի դնի:
Յակոբը հին դասից, ոչինչ
Ժ յիշում:



Գ Պ Լ Վ Ա Յ

տղայ, երեխայ, սատանայ, շուկայ.

Մայրս շուտով կը գայ ու մեզ միրգ կը տայ:
Մարդ որ ուզենայ՝ ամեն բան կը սովորի:
Հացից յետոյ Արտիկը շուկայ պիտի գնայ:
Լուսնկայ գիշեր էր, որ ես եկայ:
Այսօրւայ դասս շատ հեշտ է:
Համլիկը շատ սատանայ տղայ է:

Մեր մէջ ահա՝ սա լաւ է գրում, դա միջակ, իսկ
նա շատ վատ:

Մրա երեսին մտիկ. գնա լւա:

Գնա, ասա, արա, խաղա, լւա, կարդա:
Արա, Յուղա, Աննա, Իտալիա, Անգլիա:

Բակի զինորմերը





Ժամացոյց

Ժ

Ժ

Մի բաժակ ջուր տուր, կուժը դուրսն է:
Ուժս չի պատում, կուժը վերցնեմ:
Վարժապետն ու վարժուհին:
Մժեղները օդի մէջ դժվարում էին:
Ամեն կիրակի շատ ժողովուրդ է ժողով-
ում ժամի բակում:

Եկալ բժիշկի զայռ Ժ.

Համօն նստել էր էշին: Ինչ անում էր, չէր անում,
էշ տեղից ժաժ չէր գալիս:
Տեսաւ՝ հնար չըկայ, իջաւ, մի
գաղար գտաւ, կալեց մտրակի
պարանից, նստեց ու մտրակը
մեկնեց այնպէս, որ գաղարը
կախ ընկաւ էշի դնչի դէմ: Էշը
ուզեց ուտի՝ չը հասաւ. շարժւեց, գաղարն էլ շարժ-
ւեց, և էշը սկսեց վազ տալ, որ հասնի գաղարին:



Կռունկ

Ռ

Ռ 12

Գնա, մառանի դուռը քաց արա,
մի նուռ առ ու դուռը նորից կող-
պի, չը մոռանաս:
Վառարանի վրա ջուրը եռ է գալիս:
Մլաւան կատուն մուկ չի բռնի:
Կատուն դուրս գնաց, մկները պար բռնեցին:

Ջառնուկը կայրատիւնու Ժ.

Գեղեցիկ առաւօտ է:

Ուսիների տակով հոսում է առուն:

Ագուաները կը ռռ, կը ռռ, կոռում

են անտառում:




Ռ Ռուբին, Ռուբին

Թ ո վարժապետ, Թուրէնը ուետինս առել է:

Կովկասը Թուսանտանի մի մասն է:

Թուսերէն տառերը դեռ չեմ սովորել:

Հանելուկ.—Ո՞ր բառն է, որ առանց տառի է գրւում:



փափախ

փ

փ ի շ

Կոյրը փողը շօշափելով է որոշում։
Իմ տատը լաւ փլաւ է եփում։

Շուռը փափի, որ չը փցի։

Մի փիղ էին անց կացնում մեր փողոցով։
Գիտ Ստեփանը փայտով փղին խփեց ու փախաւ։



Էս ով է մրափում Ար-
փիկի անկողնի վրա։
Մեր փիսօն է։



Էս սեղանն ու են սեղանը

Հացի ժամանակ Երւանդին ու Հրանտին միշտ
նստեցնում էին պստիկների սեղանին։

—Հայրիկ, —ասաւ մի օր Երւանդը, —ինչո՞ւ մեզ
էլ էտ սեղանին չես նստեցնում։

—Երբ բեխեր ունենաս, դու էլ մեզ հետ էս սե-
ղանին կը նստես, —պատասխանեց հայրը կատակով։

Այդ միջոցին մօտեցաւ տան կատուն ու չանգը-
ռելով Երւանդի փէշերը՝ իր բաժինն էր ինդրում։

—Կորի, փիսօ, էն սեղանը, —բարկացաւ Երւան-
դը. —դու տհագին բեխեր ունես։



թիթեռ

թ

թ թ

Կովը կթեցին, հորթուկին կաթ չը
թողին։

Պառաւը իր թանին թթու չի ասի։

Մի թիթեռ թուոքք թիթեռ։

Միրուն թութակը շատ թեթևամիտ թոչուն է։
Մաթոսը թմբուկ էր խփում, Մարթան փող
էր փշում և այսպէս ուրախ-զւարթ խա-
ղում էին։



Երեք կաքաւ

թ

թ թ

Ատամներդ քորոցով մի քըչըփորի։
Ունքը շինելու տեղ՝ աչքը հանեցին,
Աքլորը իր բնում քաջ կը լինի։
Եշլուզեց հանաք անի, քացի տւաւ։

Իմ քոյրիկը մի քանի ընկեր է հաւաքել ու իր տիկ-
նիկի հարսանիքն է անում։

Միդրը շախորի խողը թ։

Փ Փրիիպոս

Բ Բորոս, Բազուհի

Ջ Ջիրոք, Ջրիսպինք

Փ Փի քամի, ամպը քամ:

Փայլուն արե, դուրս արի:

Թ Թ —Թաթնս, ասա՝ «գութան»:


Թաթուն ասաւ՝ «գութան»:

—Ես սեր ուտեմ՝ դու թան:

Ք Ք Քոյրիկ ջան, զարթնել ես:

Քունդ անուշ:

Անդուն դեւի հերիարք



Մութ գիշեր է: Պառաւ պապը
թիկն է տեղ մութաքին ու հե-
րիաթ է պատմում:

—Լինում է չի լինում, մի զե
է լինում: Ես դեր էնքան հարուստ
է լինում... էնքան հարուստ է
լինում... Իր օրումը իսկի չէր
քնում... իսկի չէր քնում... իսկի...

Այստեղ պապը լոեց:

—Յետոյ, յետոյ, պապի, խնդրում եին թոռները:
Մին էլ տեսան՝ պապը խոմփում է:



Ճ Ճեռնակներ

Ճ

Մոծակը Այծեմսիկի ծնոտը

կծել է:

Համմէ.—Շաբարը ծամէ:

Գող տղան ծածուկ ելաւ ծառը,

ցած դալ չը կարողացաւ:

Մեր ծանօթ ծերունին քթոցով ծի-
րան է ծախում:

Արծիւը մեծ և ուժեղ թոշուն է.

Եկը իր ույրելին ծիծից պային

Ժ Ժ Ժլատ մարդու համար էժան
բան չը կայ:


Ժանգոտ մարդու երեսին
ժպիտ չի լինում.



Ծ Ծովինարը ծափ է տալիս,
Պայծառիկը պար է գալիս:

Ճ Ճամանակը ունի է:

Ճ Ճիպը ճարին ծրբում է:



Ճ Ճ

Մէկ ձեռքով երկու ձմերուկ չեն
բռնի:
Փառանձեմը իր տիկնիկի համար մի ձեռք շոր է ձևել:

Մի թիրիայ չու:




Գէորգը հեծաւ հօր ձեռնա-
փայտը ու ձայն տւաւ. «Եյ,
զնում եմ Գանձակ, ձեզ համար
տանձ ու խնձոր բերեմ»:
Ասաւ, սանձը ձիգ տւաւ, մը-
տրակը խփեց ու ձին քշեց:



Ճանճ

Ճ Ճ


Խրճիթում ճրագ է երևում:
Այսօր գնում ենք լճի ափը ճաշելու:
Անձարը կերաւ բանջարը:
Կարճիկ Պերճը ճիպոտը ձեռքին՝ ճուտի ետևիցն է ընկել:
հայր ճուղը մի ճի՛ռու ճամփե.



Նունուֆար Փ Փ Փ

Տան մօտ կանգնած է մի ֆուրդօն:
Թիֆլիսը կովկասի մայրաքաղաքն է:
Տաճիկները գլխարկի տեղ ֆէս են դնում:

Ծունուֆարը գրային ժարի ժ:



Զ Ճ Զկնորսը ձորում ձուկ
է որսում թոռը ձեռքին:
Զախլիկը ձախ ձեռքով
է գործ տեսնում:

Ճ Ճ Ճուտիկները բնում ճըւում են՝ «Ճիւ, ճիւ, ճիւ»:
Ճիկ, ճիկ, ճիչ էք ուզում, հարցնում է մայր ճնճղուկը:
«Ճի-ճու, ճի-ճու», ասում են ճուտիկները:
Ֆ Փ Ֆրանսիացիք փողը հաշւում են ֆրանկներով,
ոռւսները ոռւբլիներով.

Չ Չ Չոյոր անջրե չի լինու:

Ճ Ճ Ճպուռը ճրոռուժ:

Ջ Ջ Ջորան զնաց ջրանիս:




սարեակ եա

սենեակ, որդեակ, մանեակ, լուսնեակ,
անցեալ օր, գարձեալ, կատարեալ,
պաշտօնեայ, քրիստոնեայ, գործունեայ։

7

եօթը եօ

արդեօք, եօնջա.



սիւն իւ

ձիւն, արիւն, հնչիւն, մռնչիւն, անկիւն.
ալիւր, հիւր, հարիւր, աղբիւր, զեփիւր.
գիւղ, շիւղ, իւղ, երկիւղ, զամբիւղ.
բնութիւն, բարութիւն, չարութիւն.

Աղբիւրի մօտ զրոյց էին անում եօթը գիւղացի։
Սարեակը շիւղ է հաւաքում, որ բուն շինի։
Սենեակի անկիւնում սարդը ոստայն է հիւսում։
Լուսնեակը ծագել է. երեկոյեան քամին թարմութիւն է բերում։

Մենք այս տարի սովորում ենք՝ հայերէն, կրօն,
թւաբանութիւն, իրազննութիւն, նկարչութիւն, երգ
ու ձեռագործ։

Ինձ հետ սովորում են՝ Գայիանէ Գէորգեան,
Հոփիսիմէ Մկրտչեան և Լսոն Յովհաննիսեան։
Գրի ըստ անունն ու ազգանունը։

Ալուրենի կարգը

Աա, Բբ, Գգ, Դդ, Եե, Զզ, Էէ, Ըը, Թթ, Ժժ,
Իի, Լլ, Խխ, Ծծ, Կկ, Հհ, Ձձ, Ղղ, Ճճ, Մմ,
Յյ, Նն, Շշ, Ոո, Չչ, Պպ, Ջջ, Ռր, Սս, Վվ,
Տտ, Ռր, Ցց, Ււ, Փփ, Քք, Օօ, Ֆֆ,


Տառերի անունները

այթ բեն գիմ	գա եչ զա	է ըթ թօ
ժէ ինի լիւն	խէ ծա կէն	հօ ձա ղաթ
ձէ մեն յի	նու շա ո	չա պէ ջէ
ոա սէ վի	տիւն րէ ցօ	վիւն փիւր քէ
	օ ֆէ	

Չայնաւորներ ու բաղաձայններ

Չայնաւորներն են՝ ա, ե, է, ի, ո, օ, ը,
նոյնպէս՝ ու, իւ, եա, եօ։

Բաղաձայն են մնացած հնչիւնները։



թա, ֆր, ջջ, թթ, ել, զզ,

էլ, ըր, թթ, ժժ, իի, լլ,

իւիւ, ջջ, կկ, հհ, զզ, ոո,


ժժ, սս, ջյ, նն, շշ, ռռ,

քք, կյա, ջջ, ռռ, մմ, վվ,

թթ, ըր, ցց, ժլ, փփ, ֆֆ,

օօ, թթ.

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 0



ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1. Լուսաբացին

—Ծուղրուղճւ.

Աքլորը զիլ կանչեց թառին.

—Ճիկ-ճիկ, ճիկ-ճիկ,

Զարթնեց մթնում ծիտը ծառին:

—Ծուղրուղճւ.

Խօսեց ծէգին երկրորդ բերան.

—Հօ-հօ, հօ-հօ,

Նախիրն արդէն հանդը տարան:

—Ծուղրուղճւ.

Լոյսը բացւեց երրորդ կանչին.

—Վհւյ, վհւյ, վհւյ, վհւյ:

Նստեց նանը տեղի միջին:

1) Ինչո՞ւ է նանը «վույ-վույ» անում:

2) Ի՞նչ կենդանիներ են լինում նախրում:

3) Բացի աքլորից էլի ինչ ընտանի թոշուններ են ապրում քակում:

2. Ծոփի գուղպաները



Զմեռ էր: Ծիտը կծկւած նստել էր մերկ ծառին: Մրսում էին նրա բարակ տոտիկները: —Ծիւ, ծիւ, գարունը որ գայ, ինձ համար գուլպայ պիտի գործեմ, ասում էր նա մօտը նստած կաչաղակին:

Գարունը եկաւ: Ծիտը, ծիւ, ծիւ, թռչկոտում էր կանաչ տերևների մէջ:

—Բա ինչու գուղպաներ չես գործում, հարցրեց կաչաղակը:

—Ի՞ն, պատասխանեց ծիտը. Ես ով, գուղպան ով:

Բացի ծտից ու կաչաղակից, էլի ինչ թռչուններ են մնում մեզ մոտ ձմեռը:

3. Լուսացաւ

Լուսացաւ,
լուսացաւ.
յոյսն է բարին;
ծիտն է ծառին,
հաւն է թառին:
Աշխատաւոր, վեր կաց բանի,
ծոյլ տղայի քունը տանի:

4. Առաջին ձիւնը

—Վայ, մայրիկ ջան, տես,
բակն ու դուռը լի
ի՞նչքան ըսպիտակ
թիթեռ է գալի...
Էսքան շատ թիթեռ
չեմ տեսել ես գեռ:
—Չէ, իմ անուշիկ,

Էլի ինչի նման են ծիւնի փաթիլները:

թիթեռներ չեն էտ.
թիթեռներն անցան
ծաղիկների հետ:
էտ ձիւնն է գալի.
փաթիլն է ձիւնի,
որ կարծես սիպտակ
թիթեռիկ լինի:

4. Ուղիկը

1.



Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ: Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արօտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծը լիքը տուն է գալի: Տուն է գալի, դուռը զարկում ու մկրկում, էսպէս կանչում.

Սկուկ ուլիկ,
սիրուն բալիկ,
ման եմ եկել սարէ սար,
կաթն եմ արել քեզ համար.
դըռնակը բաց, ներս գամ ես,
անուշ-անուշ ծիծ տամ քեզ,
սկուկ ուլիկ,
սիրուն բալիկ,

Ուլիկն խկոյն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալի նրան ու կրկին գնում արօտ:

2.

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում:

Սկուկ ուլիկ

սիրուն բալիկ,

ման եմ եկել սարէ սար,
կաթն եմ արել քեզ համար,
դըռնակը բաց, ներս գամ ես,
անուշ-անուշ ծիծ տամ քեզ,
սկուկ ուլիկ,

սիրուն բալիկ:



Ուլիկը լսում է լսում, ու պատասխանում: «Ետ հի ես դու,
չեմ ճանաչում: Իմ մայրը էտպէս չի կանչում: Նա բաղցը ու բարակ ձայն ունի: Թու ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չեմ անի... Գնա... չեմ ուզում քեզ...»

Ու գայլը հեռանում է գնում:

3.

Գալիս է մայրը դուռը ծեծում:

Սնուկ ուլիկ,

սիրուն բալիկ,

ման եմ եկել սարէ սար,

կաթն եմ արել քեզ համար.

դրոնակը բաց, ներս գամ ես,

անուշ~անուշ ծիծ տամ քեզ:

սնուկ ուլիկ,

սիրուն բալիկ.

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մօրը պատմում:

—Գիտես, մայրիկ, ինչ եղաւ. Մի քիչ առաջ մինը եկաւ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սնուկ ուլիկ,

սիրուն բալիկ.

Ասում էր՝ դուռը բաց արա. Էնպէս հաստ ձայն ունէր. Էնպէս վախեցայ, Էնպէս վախեցայ... Դուռը բաց չարի, ասի՞ չեմ ուզում, գնա...

—Պա, պա, պա, պա, սնուկ ջան, ինչ լաւ է եղել, որ բաց չես արել, ասաւ վախեցած մայրը. Էտ գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի. Միւս անգամ էլ որ գայ, բաց չանես. ասա՝ գնա, թէ չէ իմ մայրը կը գայ, քեզ կը սպանի իր սուր պողերով:

1) Այծն ինչ է ուտում, գայլն ինչ է ուտում;

2) Ուրիշ ինչ կենդանի գիտես, որ խոտ է ուտում;

3) Ուրիշ ինչ կենդանի գիտես, որ միս է ուտում;

4) Պողերն ինչի՞ համար են:

Առած.—Սնուէր ոչխարը գայլը կուտի:



ընկնում պոչին:


Ճստիկ-Ճուտիկը վախեցած դուրս է փախչում. Վագում է վագում հասնում է Հաւիկ-Մարիկին:

—Վայ, Հաւիկ-Մարիկ, —կանչում է հեռուից, —երկինքը փուլ է գալիս:

—Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էտ որտեղից իմացար, —հարցնում է Հաւիկ-Մարիկը:

—Օ՛, ես իմ աչքովը տեսայ. իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկաւ.

—Դէ, արի փախչենք, —ասում է Հաւիկ-Մարիկը:



2.

Վագում են վագում, հասնում են Բաղիկ-Տատիկին:

—Վայ, Բաղիկ-Տատիկ, —կանչում է Հաւիկ-Մարիկը. —երկինքը փուլ է գալիս:

—Ա՛ Հաւիկ-Մարիկ, էտ որտեղից իմացար, —հարցնում է Բաղիկ-Տատիկը:

—Ճստիկ-Ճուտիկն է ասում:

—Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էտ որտեղից իմացար:

—Օ՛, իմ աչքովը տեսայ, իմ


ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկաւ:
—Դէ, եկէք փախչենք,—ասում է Բաղիկ-Տատիկը.

3.

Վազում են վազում, հասնում են Սագիկ-Խաթունին:
—Վայ, Սագիկ-Խաթուն,—կանչում է Բաղիկ-Տատիկը,—
երկինքը փուլ է գալիս:
—Ա՛ Բաղիկ-Տատիկ, էտ որտեղից իմա-
ցար,—հարցնում է Սագիկ-Խաթունը:
—Հաւիկ-Մարիկն է ասում:
—Ա՛ Հաւիկ-Մարիկ, էտ որտեղից իմա-
ցար:
—Ճստիկ-Ճուտիկն է ասում:
—Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էտ որտեղից իմացար:
—Օ՛, իմ աչքովը տեսայ, իմ ա-
կանջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկաւ:
—Դէ, եկէք փախչենք,—
ասում է Սագիկ-Խաթունը:

4.

Վազում են վա-
զում, հասնում են
Հնդու-Հաւին:
—Վայ, Հնդու-
Թնդու, —կանչում է
Սագիկ-Խաթունը, —
երկինքը փուլ է գալիս:
—Ա՛ Սագիկ-Խաթուն, էտ որտեղից իմացար,—հարցնում է
Հնդու-Թնդուն:
—Բաղիկ-Տատիկն է ասում:
—Ա՛ Բաղիկ-Տատիկ, էտ որտեղից իմացար:
—Հաւիկ-Մարիկն է ասում:
—Ա՛ Հաւիկ-Մարիկ, էտ որտեղից իմացար:



—Ճստիկ-Ճուտիկն է ասում:

—Ա՛ Ճստիկ ճուտիկ, էտ որտեղից իմացար:

—Օ՛, իմ աչքովը

տեսայ, իմ ական-

ջովը լսեցի, մի

կտորն էլ դեռ

պոչիս ընկաւ:


—Դէ, եկէք

փախչենք.—ա-

սում է Հնդու-

Թնդուն:

5.



—Ա՛ Հնդու-Թնդու, էտ որտեղից իմացար,—հարցնում է
Աղա-Աղւէս:

—Սագիկ-Խաթունն է ասում:

—Ա՛ Սագիկ-Խաթուն, էտ որ-
տեղից իմացար:

—Բաղիկ-Տատիկն է ասում:

—Ա՛ Բաղիկ-Տատիկ, էտ որ-
տեղից իմացար:

—Հաւիկ-Մարիկն է ասում:

—Ա՛ Հաւիկ-Մարիկ, էտ որ-
տեղից իմացար:

—Ճստիկ-Ճուտիկն է ասում:

—Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էտ որ-
տեղից իմացար:



—Օ՛, իմ աչքովը տեսայ, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկաւ:

—Ետ ի՞նչ էք ասում, ասում է Աղա-Աղւէսը. —Եկէք ձեզ տանեմ իմ տունը, որ երկինքը ձեր գլխին փուլ չը գայ:

Ճստիկ-Ճուտիկը, Հաւիկ-Մարիկը, Բաղիկ-Տատիկը, Սագիկ-Խաթունը, Հնդու-Թնդուն-բոլորը միասին ընկնում են Աղա-Աղւէսի եսեից և մտնում են նրա բունը:

Մտնում են նրա բունը ու էն մտնելն է որ մտան, մինչև էսօր էլ դեռ դուրս չեն եկել:

1) Երկինքը հօ փուլ չէր գալիս, ապա ի՞նչու էին բոլորը փախչում»

2) Երկինքը իսկապէս ո՞րտեղ փուլ եկաւ որանց գլխին:

Առած.—Իշխ գերեզմանը դայլի փորն է:

7. Բաղիկը

Բաղիկ, բաղիկ,

կարմիր թաթիկ,

ուր ես գնում կամաց կամաց,
ձագուկներդ չորս կողմդ առած:

—Ես գնում եմ ջուր գտնելու,
ձագուկներս լըւանալու.
ձագուկներս մաքուր-մաքուր,
տղոց երեսն աղտ ՚է ու մուր:

Վերջի տողը կասէր բաղիկը, եթէ քո երեսին նայէր:

8. Օգնութիւն

Փոքրիկ Լուսիկը գիրքը թերթում էր, տեսաւ մի աղւէսի պատկեր:

Աղւէսը բռնել էր մի հաւ ու գրզզրզում էր:

—Մայրիկ ջան, մայրիկ, —կանչեց նա յանկարծ. —արի,
շուտով արի, աղւէսի բերանից մեր աքլորին ազատի:



9. Շոնը

Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,
ահա այսպէս
հաչում եմ ես.

Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,
ու տունն այսպէս
պահում եմ ես:
Թէ գայ մեզ մօտ
մի հին ծանօթ,
մօտն եմ վազում
պոչըս շարժում:

Բայց թէ մի գող,

չար կամեցող,

ուզի թաքուն

մտնի մեր տուն,—

հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,

ահա այսպէս

հաչում եմ ես.

հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,

ու տունն այսպէս

պահում եմ ես:


1) Շոնը միայն տինն է պահում:

2) Ուրիշ էլ ի՞նչ օգուտ է տալիս շոնը:

10. Երկու հարեւան

1.

Ասլանը մի ահազին շուն էր, իսկ Մոխրիկը մի փոքրիկ կատու. Մի օք Մոխրիկի առաջ մի աման կաթ էին դրել:



Մոխրիկը հէնց
սկսեց լակել, շունը
վրա ընկաւ, դնչով
գէն հրեց փիսիկին ու
կաթը լակեց:

Փիսիկը մի կողմ՝
քաշւեց, նայում էր ու
տիսուր տիսուր լիզում
էր կաթնոտ բեխերը.

Իսկ Ասլանը ու-
րախ ու հպարտ իր

պոչն էր շարժում:

2.

Յաջորդ օրը խոհարարը մի մեծ կտոր միս շպրտեց Ասլանին.
Շունը գեռ տեղից վեր չէր կա-
ցել, կատուն վրա պրծաւ, խլեց
միսը ու արագ ելաւ ծառը, հանգիստ
նստեց երկու ճիւղի արանքին և լս-
կուց ճաշել:



Ասլանը կանգնել էր ծառի տակը ու
բարկութիւնից չէր իմանում ինչ անի:

Մի երկու անգամ պտըտեց ծառի
չորս բոլորը, փորձեց վեր թռչի, նրա-
տեց ու սոված նայում էր վեր:

Իսկ անիծած մսի հոտն էլ
էնպէս անուշ գալիս էր:

Առած: Ի՞նչ կը ցանես՝ էն
կը հնձես:

- 1) Շունն ինչով յաղթեց, կա-
տուն ինչով:
- 2) Շունն ինչով ըստ կարողացաւ
ծառը բարձրանալ:
- 3) Ի՞նչ օգուտ է տայիս կատուն:



11. Իրիկուն

Արեւ շատ էր յոզնել. ման էր եկել ամբողջ օրը.
«Հերիք է, ասաւ,
գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերեւ ուրախ սրւսրւում էր, որ կանգ առաւ.
«Ես ինչ է, ասաւ,
արևն էլ չի երևում.
ես էլ պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը երգում էր ծառի վրա, յանկարծ լոեց.
«Ես ինչ է, ասաւ,
ոչ տերեւ է սրւսրւում,
ոչ արևն է երևում,
ես էլ գնամ ու քնեմ»:

Նապաստակը ոստոստում էր թփերի տակ, որ ականջը սրեց.
«Ես ինչ է, ասաւ,
ոչ թռչնակ է ծըլւըլում,
ոչ տերեւ է սրւսրւում,
ոչ արևն է երևում,
ես էլ գնամ ու քնեմ»:

Որսկանն անտառում որս էր որոնում, կանգնեց.
«Ես ինչ է, ասաւ,
ոչ նապաստակ է վազ տալի,
ոչ թռչնակ է ծըլւըլում,
ոչ տերեւ է սրւսրւում,

ոչ արև է երեսւմ,
 ես էլ գնամ ու քնեմ»:
Լուսինը ծագեց, ցած նայեց տեսաւ.
 «Ի՞նչ լաւ է, ասաւ,
 ոչ որսորդ է ման գալի,
 ոչ նապաստակ վաղ տալի,
 ոչ թռչնակ է ծըլւըլում,
 ոչ տերև է սրւսըլում,
 ոչ արևն է երեսւմ.
 մենակ ես եմ, որ անքուն
 քէֆ եմ անում երկընքում»:

1) Ի՞նչ կասէր լուսաբացին լուսինը, արեւը, տերեւը, թռչնակը, նապաստակը, որսորդը:

ԱՄԵՆՆ ԻՐ ՏՈՒՆ

Ամենն իր տուն,
 լավլագն իր բուն,
 մուկն ու կատուն
 ձեր պապոնց տուն:

12. Մարզօհ հարստութիւնը

—Ես ինչ ծանր է գոգնոցդ, Մարզօհ: Ի՞նչ կայ գրպանումդ,—ասաւ մայրը իր փոքրիկ աղջկան, որ հանւել էր ու պառկել:

—Իմ բաներն են, մայրիկ, ձեռք չը տաս,—պատիրեց Մարզօն ու զլուխը կոխեց վերմակի տակ:

Մայրը ժպտաց ու մէկ մէկ հանեց Մարզօհ հարստութիւնը: Մի դեղին մատնոց, մի պատռած պօրտմօնէ, տիկնիկի թէյի բաժակը, էն էլ կոտրած, մի ժանգոտ բանալի, մի փայտէ ոչխար, որ միայն մի ոտք ունէր և մի ականջ, յետոյ ծայրը կրծած մի մատիտ, մի քանի կոճակ, գոյնզգոյն չթի կտորներ,

մի քանի սպիտակ ու կապոյտ փոքրիկ բարեր, և վերջապէս էտ բոլորի տակ Մարզօհ թաշկինակը:

—Լսի, Մարզօհ ջան, էսքան բան չի կարելի գրպանում ման ածել: Ես քեզ իմ սապոնի տուփը կը տամ, կը դնես մէջը: Հա, ջանիկս:

Բայց ջանիկը ոչինչ չը պատասխանեց. նա վաղուց քնել էր:

1) Գրպանում ինչ են պահում:

13. Զեռքի մատները

Ճկոյթն ասաւ—Եկէք ուտենք:
 Մատանու-մատն ասաւ—Ի՞նչ ուտենք:
 Միջի-մատն ասաւ—Աստւած կը տայ:
 Յուցամատն ասաւ—Թէ որ չը տայ,
 Բութ-մատն ասաւ—Գողանանք ուտենք:
 Աստւած բարկացաւ, զարկեց բութ մատի զլիսին,
 միւսներից բաժանեց, քշեց ցած ու հրամայեց, որ միւսներին
 ծառայի:

1) Ի՞նչով է տարբերում ծեռքի բութը ոտի բութ մատից:

2) Ի՞նչ ենք անում ծեռքով, որ ոտով չենք կարող:

3) Ի՞նչ կենդանիներ զիտես, որոնք ոտով բռնում են:

Առած.—Զւի գողը ձիու գող կը դառնայ:

**

Ճստիկ ճկոյթ,
 աղա մատնեմատ,
 երկար-լոլոզ միջի մատ,
 աման-լիզող յուցամատ,
 մշակ բութ:

Հանելուկ.—Մշէ շամփուր, երկաթի խորոված:

14. Արդեն աշակերտ է

Այդ երեկոյ հանէսը շատ անհանգիստ էր:

Նա մի քանի անգամ հանեց իր գրքերն ու տետրակները ու նորից դրաւ պայուսակը, մի քանի անգամ մէկ-մէկ նայեց մատիտները, գրչակոթը, գրիչները ու նորից պահեց գրչատուփի մէջ։ Մի քանի անգամ մօտեցաւ մօրը։

—Մայրիկ ջան, տես, չը մոռանաս, էգուց ինձ անպատճառ շատ վաղ զարթեցրնւ, շատ վաղ. ուսուցիչը ասաւ՝ որ չուշանամ։

Վերջապէս պայուսակը կախեց մահճակալի գլխին, հանւեց ու անկողին մտաւ։ Բայց երկար ժամանակ քունը չէր տանում։

Նա մտածում էր թէ ինըը արդէն աշակերտ է և այդ օրւանից գնում է դպրոց։

Առած. — Տաշած քարը գետնին չի մնայ.։

Հանելուկ. — Ցերեկը տիկին, գիշերն աղախին։

15. Գրիչ

«Ի՞նչ կը լինի, ասա, գրիչ,
ինձ էլ սիրես գոնէ մի բիչ։
Ինչու իմ մեծ քրոջ ձեռքին
գրում ես միշտ վարժ ու կարգին.
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես
սև ագուաւի ճանկերի պէս։
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել.
Եկ, խնդրում եմ՝ ինձ համար էլ
գրի էնպէս արագ-արագ,
էնպէս ուղիղ, սիրուն, բարակ։»
«Գրիչը լուռ լրսում, լրսում,
ճըռճըռում է ու խազմըզում,
բայց այս անգամ արդէն, կարծես,
փոքրիկ ծըտի ճանկերի պէս։»

1) Դասական ի՞նչ պիտոյքներ գիտես։

16. Արեւ ու Լուսին

Լուսմէրիկը իր աղջրկանն ու տղին ուղարկեց, որ հերթով հակեն աշխարհքին. մինը՝ ցերեկը, միւսը՝ գիշերը։ Աղջկայ անունը Արեւ էր, տղինը Լուսին։

—Քուրիկ, ես ցերեկը կերթամ, իսկ դու գիշերը, հա՞— ասաւ չարաձճի Լուսինը։


—Զէ, ես աղջիկ եմ, ես գիշերը կը վախենամ, — հակառակեց սիրուն Արեւ։

Եւ քոյր ու եղբայր կուեցին ու կրկին եկան իրենց մօր մօտ։

Մայրը խմոր էր հունցում։ Ասաւ.

—Դու գիշերը գնա, Լուսնիկ ջան. Արեգն աղջիկ է, նա կը վախենայ։

—Զէ, ի՞նչ անեմ՝ կը վախենայ, — յամառեց Լուսինը ու շըրթունքները ուղցրեց կանգնեց։



—ԶԵմ գնում:

Լուսմէրիկը բարկացաւ, ձեռները խմորից հանեց ու մի ապտակ տւաւ իր կամակոր տղին: Լուսինը խոռվեց, խմորոտ երեսով դուրս եկաւ ու գնաց իր ճամփան:

—Դէհ, դու էլ գնա ցերեկը շրջի, —դարձաւ մայրը սիրուն Արևին:

—Յերեկն էլ ամաչում եմ, մայրիկ. ամենքը իմ երեսին նայում, —ասաւ Արևը ու կարմրած կանգնել էր մօր կողքին:

Այն ժամանակ Լուսմէրիկը մի բուռն ասեղ տւաւ նրան.

—Ա՛ռ այս ասեղները, ով երեսիդ նայի, աչքերը ծակի:

Այն օրւանից Լուսինը դուրս է գալի գիշերները խմորոտ երեսով, իսկ Արևը շրջում է ցերեկը ու չի թողնում երեսին նայեն. նայողի աշքերը ծակում է մօր տւած ասեղներովը:

1) Արեւը ինչից էր վախենում եւ ինչից էր ամաչում:

2) Ինչո՞ւ Արեւի վախենալն ու ամաչեցը լաւ չէր:

3) Ի՞նչպէս ենք ասում այն երեխին, որ ամեն յիմար քանից վախենում է: Ի՞նչպէս ենք ասում այն երեխին, որ ամեն քանից ամաչում է:

4) Ի՞նչո՞ւ մայրը բարկացաւ Լուսի վրա:

Հանելուկ. —Սև արաբը բեին ոլորեց, հազար հազար մարդ զլորեց:

17. Մկան տունը

—Ո՞ւր է, Մուկիկ քո բունը:

«Հա, հեռու չի իմ տունը.

Կերթաս էսպէս դու առաջ,

յետոյ քիչ ճախ, յետոյ աջ,

կելնես քիչ վեր,

կիջնես ցած,

Էնտեղից էլ

1) Մուկը ընտանի թէ վայրենի կենդանի է:

քիչ անցած՝

նորից քիչ ճախ, նորից աջ,


բունս կը գայ քո առաջ:

Բայց դուռս ու շեմ,

պէտք է ասեմ,

սաստիկ փոքր է, դըրացի,

ներս մըտնելիս կը ուացի:



18. Զալ հարի պատմութիւնը

1.

Զալ հաւը բուջուջ էր անում: Մէկ էլ զլուխը վեր բաշեց ու կանչեց.

—Հատիկ եմ գտել, ցորենի հատիկ: Ո՞վ կը նանի:

—Զէ, —ասաւ կատուն:

—Զէ, —ասաւ բաղը:

—Զէ, —ասաւ խոզը:

—Լաւ, ես կը ցանեմ, —ասաւ հաւը, ու ցորենը ցանեց: Ցորենը բուսաւ, մեծացաւ, հասկը լցւեց ու զլուխը կախեց: 2.

Եկաւ հնձելու ժամանակը:

—Հասկը կախել է զլուխը: Ո՞վ կը հնձի. —կանչեց չալ հաւը:

—Զէ, —ասաւ կատուն:

—Զէ, —ասաւ բաղը:

—Զէ, ասաւ խոզը:

—Լաւ, ես կը հնձեմ, —ասաւ չալ հաւը ու ցորենը հնձեց: 3.

Եկաւ աղալու ժամանակը:


—Ես ցորենը ով կաղայ, —կանչեց չալ հաւը:

—Զէ, —ասաւ կատուն:

—Զէ, —ասաւ բաղը:

—Զէ, —ասաւ խոզը:


—Լաւ, ես կաղամ, —ասաւ չալ հաւը: Ցորենը տարաւ ջաղաց ու աղաց:



4.

Եկաւ հունցելու ժամանակը:


—Ես ալիւրը ո՞վ կը հունցի, —կանչեց չալ հաւը:
—Չէ, —ասաւ կատուն:
—Չէ, —ասաւ բաղը:
—Չէ, —ասաւ խոզը,
—Լաւ, ես կը հունցեմ, —ասաւ չալ հաւը ու ջուր ածաւ, խմորը հունցեց:



5.

Եկաւ թխելու ժամանակը:

—Ես խմորը ո՞վ կը թխի, —կանչեց չալ հաւը:
—Չէ, —ասաւ կատուն:
—Չէ, —ասաւ բաղը:
—Չէ, —ասաւ խոզը:
—Լաւ, ես կը թխեմ, —ասաւ չալ հաւը, խմորը գնդեց ու դրաւ փուռը:



6.

Եկաւ ուտելու ժամանակը:

—Ես թաժայ հացը ո՞վ կուտի, —կանչեց չալ հաւը:



—Ես, —ասաւ կատուն:

—Ես, —ասաւ բաղը:

—Ես, —ասաւ խոզը:

—Չէ, ես կուտեմ, —ասաւ չալ հաւը, ու կերաւ:

Ցորենից էլ ինչ են շինում:

Առած, —Բան դրին՝ փախաւ, հաց դրին, հասաւ:

Շուտասելուկ. —Մի տաշտ հով ճաթ,
մի տաշտ տաք ճաթ,
մի տաշտ ճաքճըքոտած ճաթ:

19. Անկոչ հիւրեր

Շոք էր: Բակում իր տնակի մէջ ձգւել էր շունը: Դունչը դրել էր երկու թաթերի վրա ու աչքերը խփել: Առջեր դրած էր լափի ամանը:

Երկու ձնձղուկ թառ էին եղել դէմուդէմ ցանկապատի վրա ու վաղուց սպասում էին:

—Քնեց, —ասաւ մէ-

կը թևերը շարժելով:

—Չէ, —պատասխանեց միւսը. —Տես, ականջները ժաժ է տալիս:

—Վախում ես, —հարցրեց ընկերը:

—Ես չեմ վախում:

Արի գնանը:

Ու թռաւ, իջաւ

գետնին, շան տնակի

առաջ, յետոյ յանկարծ ցատկեց ամանի եղերքին ու տիկ, տի'կ,


սկսեց արագ կտցահարել:


Ընկերն էլ սիրտ առաւ, ցանկապատից թռաւ ցած ու եր-

կուսով շտապ-շտապ կտցահարում էին:

Տըկտըկոցից շունը զալթնեց, աչքերից մէկը բաց արաւ, ըիչ նայեց անկոչ հիւրերին, մի բան մոռաց ըթի տակ ու նորից աչքը փակեց...

Շունը ինչ մոռաց քիթի տակին:





20. Փիսիկի գանգատը

Փիսիկը նըստել
մի մութ անկիւնում,
ունքերը կիտել
ու լաց է լինում:
Մօտիկ է գալի
մի ուրիշ կատու.
—Ի՞նչու ես լալի,
այ Փիսիկ ջան, դու...
—Ի՞նչ անեմ հապա,
որ լաց չը լինեմ,—
գանգատ է անում
Փիսօն տըխրաղէմ.
Էն Համօն թաքուն
մածոնը կերաւ,
գընաց տատի մօտ
ինձ վըրա դըրաւ:
Հիմի տատիկի

ետևից ընկած,
ինձ են մտն գալի
մի-մի փէտ առած
էն ըոթոթ Սուրբէնն,
Անօն ու Մօսօն.
«Ո՞ւր է, ասում են,
ուր է գող Փիսօն,
ախ, թէ մի գըտանք,
մածոն ցոյց կը տանք»...
Էսպէս բան սարքեց
էն Համօն իմ զէմ:
Ի՞նչ անեմ հապա,
որ լաց չը լինեմ...
Ու Փիսօն նըստել
մի մութ անկիւնում,
ունքերը կիտել
ու լաց է լինում:

21. Խելօք երեխաներ

1.

Քուրիկն ու Սուրիկը գնում էին տատիկի մօտ: Երբ հասան փոքրիկ գետակին, տեսան որ տախտակը չը կայ, որի վրայով միշտ գնում-գալիս էին:

Իսկ տատիկը խիստ արգելել էր՝ երբէք ջուրը չը մտնեն,
որ կօշիկները բաց չանեն ու չը հիւանդանան:

Քուրիկն ու Սուրիկը նայեցին իրար:

—Ի՞նչ անենք, Սուրիկ, որ մեր կօշիկները թաց չը լինեն,—
ասաւ քուրիկը:

—Ի՞նչ անենք, քուրիկ, —ասաւ Սուրիկը:

Ու սկսեցին միտք անել: Այնքան միտք արին, այնքան,
որ իսկի այդքան միտք չէին արել:

2.



—Գտայ, Սուրիկ, —ասաւ յանկարծ քուրիկը: —Ես քեզ կը խտրտեմ ու ջրի միջով կը տանեմ մէկէլ ափը. քո կօշիկները կը մնան չոր: Վերջն էլ դու կը գաս, ինձ կը տանես, իմ կօշիկներն էլ կը մնան չոր:

Սուրիկը շատ ուրախացաւ իր խելօք բըռջ ասածի վրա:
Քուրիկը նրան գրկեց ու չլըմփ, չլըմփ, մտաւ ջուրը:

Զրի կէսը հասաւ թէ չէ, կանգ առաւ:

—Ի՞նչու չես գնում,—հարցրեց Սուրբիկը:

—Սուրբիկ, կօշիկներս կարծես թրջում են,—ասաւ քուրիկը:—Լաւն էն է, ցած արի, դու էստեղ մի քիչ սպասի, մինչեւ ես գնամ ափը, կօշիկներս հանեմ, ետ գամ, քեզ տանեմ:

—Լաւ,—ասաւ Սուրբիկը:—ու, չըլմի, ցատկեց ջրի մէջ, կանզնեց գետի մէջտեղը, մինչեւ որ քուրիկը գնաց ափը, որ կօշիկները հանի, ետ գայ, նրան տանի:

3.

Երբ քուրիկը կօշիկների կապերը արձակում էր, Սուրբիկը ձայն տւաւ:

—Կօշիկներս կարծես թրջում են. ի՞նչ անեմ, քուրիկ:

—Արի, դու էլ շուտով հանի կօշիկներդ:

Սուրբիկն էլ չըփչըփացնելով ետ եկաւ, նստեց, հանեց կօշիկները: Յետոյ երկուսն էլ վերցրին իրենց կօշիկները, քուրիկը նորից գրկեց իր Սուրբիկին ու անց կացրեց միւս ափը:

Ու երկուսն էլ շատ ուրախ էին, որ այսպէս խելօք կերպով անց կացան գետակը: Միայն վատն այն էր, որ կօշիկները ոչ միայն թրջւել էին, այլև լցւել էին ջրով:

—Յիմար գետակը, էս բոլորը նա արաւ, —ասաւ քուրիկը:

—Յիմար գետակը, —ասաւ Սուրբիկը:



Խելօք երեխաները ի՞նչ պիտի անէին, որ կօշիկները չեն թրջւէին:

Առած.—Զուրն իր ճամփէն կը գտնի:

Հանելուկներ.—1) Էս կողմը դար, էն կողմը դար, մէջն անդադար:

2) Զին գնաց, թամքը մնաց:

22. Էս են է...



1.

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը:

2.

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը:

3.



Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը, որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը:


4.

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը, որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը:

5.

Էս էն շունն է, որ գըղել է էն կատունն, որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը, որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը:





6.

Էս էն կովն է կէռ պողաւոր,
որ հարու է տւել էն շանը,
որ գըգել է էն կատւին,
որ բոնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:



7.

Էս էն աղջիկն է, որ կթել է
էն կովը,
որ հարու է տւել էն շանը,
որ գըգել է էն կատւին,
որ բոնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

8.

Էս էն տղան է, որ ուզել է էն
աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տւել էն շանը,
որ գըգել է էն կատւին,
որ բոնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:



6.



9.

Էս էն տէրտէրն է, որ պսակել
է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տւել էն շանը,
որ գըգել է էն կատւին,
որ բոնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

10.

Էս էն աքլորն է, որ զարթեցրել
է էն տէրտէրին,


որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տւել էն շանը,
որ գըգել է էն կատւին,
որ բոնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

11.

Էս էլ էն վարպետ Օհանը,
որ մորթել է էն աքլորին,

որ զարթեցրել է էն տէրտէրին,
որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տւել էն շանը,
որ գըգել է էն կատւին,
որ բոնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:





23. Խոհանոցում

Կէս գիշեր էր: Ամբողջ տունը
ընած էր: Լուսնի շողքը պատուհանից ըն-
կել էր խոհանոց: Մաքուր ամանները
ու կեկած պղինձները պսպղում էին:


Հանգցրած լամպը նախանձով էր
նայում լուսնի պայծառ լոյսին, բայց
լուսինը այնպէս քնքուշ էր ժպտում
նրան, որ նա խսկոյն հանգստացաւ:

Պղինձները, տապակը, սամովարը, սրճամանը, բամիչը,
շերեփը—բոլորն էլ փայլում էին ու հպարտ նայում էին ի-
րար: Վիճում էին թէ որն է իրենց մէջ ամենից փայլունը:
—Ես,—բացականչեց ուռած սամովարը խոպոտ ձայնով:
Տեսէր իմ ոսկի ճառագայթները ինչ-
պէս են վառում:

—Ո՞չ, ես եմ փայլունը,—զբընգաց
սիպտակ սրճամանը՝ սուր ու բարակ
քիթը վեր բաշելով:

—Ապա մի դէսը նայեցէր,—այն կող-
մից բերանը լայն բաց արաւ ծանը
պղինձը:

—Բա ես,—մէջ ընկաւ երկարապոչ
շերեփը:



—Դու ինչ ես ամեն բանի մէջ խառնուռմ,—չորս կողմից
ձայն տւին մեծ ու փոքր պղինձները իրենց դարակից:

Ծակբերան քամիչն էլ ուզում էր մի բան ասի, որ մէկ
էլ լուսինը մտաւ ամպի տակ, յանկարծ խոհանոցը մթնեց, ու
ամենները ձայնները կտրեցին:

1) Ի՞նչու ամենքը յանկարծ ձայնները կտրեցին, եթք խոհանոցը
մթնեց:

2) Ասա մէկ-մէկ՝ ինչի՞ համար ենք գործածում՝ վերը յիշած
ամաններն ու խոհանոցի միա պիտոյքները:

Առած.—Ամեն բան իր տեղն ունի:

Հանելուկներ. —1) Վելեկը ծակ, ներքելը ծակ, մէջը լիքը
չուր ու կրակ:

2) Բոնեմ բոնովս մին, թողնեմ տնովս մին:

24. Դժւար հանելուկ



Իր ծանօթին ու ասաւ:

—Թէ իմանում՝ թաշկինակումս ինչ կայ, սրա ձւածեղից
բեղ էլ կուտացնեմ:

—Զու, —պատասխանեց ծանօթը:

—Վահ, —զարմացաւ խելօքը. —Էտ հնց իմացար: Դէ, էն էլ
ասա՝ բանի հատ է: Թէ էտ էլ իմացար, բոլոր տասն էլ բեղ
կը տամ:

—Տասը:

—Ես, ախպէր, էտ էլ իմացար. —ասաւ Պուղին ու թաշկի-
նակով ձուն տւաւ ծանօթին:

25. Ծոյլ աղջիկը

Բանն ի՞նչ կանեմ՝ կեղտոտ է,
բամբակը կորիզոտ է.
մետաքս պիտի, որ մանեմ,
մաստակ պիտի որ ծամեմ,
կտերը տիտիկ անեմ,
անցնողին մըտիկ անեմ,
ուտեմ, խմեմ,
մթնի քնեմ:

Առած.—Ով ալարի, ոչ դալարի:
Հանելուկ.—Հինգ ախպէր են, չորսը պատ են շարում, մէկը
քար է կըում:



26. Ծոյլ տղան

Ջան, ջան, կիրակի.
Վայ, երկուշաբթի:
Նանի ջան, նանի,
փորս ցաւում է,
շեմ գնայ դպրոց:

Ի՞նչ կասէր աշխատասէր տղան, ի՞նչ կասէր աշխատասէր
աղջիկը:

Առած.—Գժի համար ամեն օր Զատիկ է:

27. Պստիկ պատմութիւն

Մի օր Մարիամիկը շփոթւած մօտեցաւ մայրիկին, ցած
զցեց իր սկուկ աչքերը ու ասաւ.
—Մայրիկ ջան, ասում էիր, որ շատ ես սիրում պստիկ

պատմութիւններ:


—Այն, աղջիկս:
—Ուզում ես, մայրիկ, պատմեմ քեզ մի այդպիսի փոքրիկ պատմութիւն:
—Պատմի. միայն թէ հին բան չը լինի:
—Ոչ, մայրիկ, բոլորովին նոր է: Ես ինքս հէնց այս ըռպէիս իմացայ մեր դահլիճում:
—Որ այդպէս է՝ պատմի:
—Բայց շատ պստիկ պատմութիւն է, մայրիկ:
—Ոչի՞նչ. աւելի լաւ որ պստիկ է:
—Սկսեմ:
—Կար ու չը կար...
—Յետոյ:
—Կար ու չը կար... մի փոքրիկ կաւէ շնիկ կար... մի սեղանի վրա:
—Լաւ: Յետոյ:
—Յետոյ այն, որ այս ըռպէիս այդ շնիկը փշեցի: Բայց
էլ չեմ անի, մայրիկ, էլ իսկի չեմ անի.

- 1) Մայրիկը հաւանեց Մարիամի պստիկ պատմութիւնը:
- 2) Ի՞նչ տեսակ աղջիկ էր Մարիամը:

Հանելուկ.—Փախչում եմ ետևիցս է ընկնում, ետևիցն եմ
ընկնում փախչում է:

28. Կճուձը

Քեռին եկաւ մեր բակը,
լիբ կճուձը շալակը.
ուսի թոկը կտրըւեց,
կճուձն ընկաւ կոտրըւեց:



Ի՞նչ կարող էր լինել կճուձի մէջ:

29. Ակարիչն ու մեքենավարը



ԵՐԵԱՆԴՐ անպատճառ նկարիչ պիտի
դասնալ:

Միշտ մատիտը ձեռքին խազմզում է
ուր որ պատահի. գրքերի լուսանցքին,
տետրակիների մէջ, սեղանի երեսին, դըռ-
ների վրա և տան պատերին:

Հայրն ու մայրը ինչքան նեղանում են, բան չի դառնում։
Այստեղ մի հաստ շուն է նկարած, ոտները կարճիկ ու
պոչը երկար, այնտեղ մի փոքրիկ ծառ, վրան լիքը թռչուններ,
ամեն մի թռչունը մի հաւի չափ. ու էլ ծաղիկներ, էլ աման-
ներ։

Մի առանձին թղթի վրա էլ նկարել է պտղի պատկերը, փառաւոր միրուքով, մագերը գըզըզւած, չիբուխը բերանին, ակնոցը աչքին, ձեռքին մի գիրը.

ԶԵ, ԵՐԱԿԱՆՈՂԸ ՈՐ ՄԵԺԱԿԱՅ, անպատճառ. Նկարիչ պիտի
դառնայ:

Խակ Երւանդի փոքրիկ եղբայրը, ի՞նչ էք կարծում, ի՞նչ պիտի դառնալ:

Ամբողջ օրը երկաթուղի է խաղում։ Աթոռները շարում է իրար ետևից, կապում է իրար, փիսիկին նստեցնում է մէկ աթոռին, մի մութաքա էլ նստեցնում է միւս աթոռին, ինքն էլ դառնում է յօկօմօտիւ (տեղաշարժ), լծում է ու քաշ տալիս:

Քաշ է տալիս սենեակից սենեակ.—հու, հու, հու, ճամփա
տւեր, ճամփան, գնազրը գալիս է:

ի հարկէ որ սա էլ մերենավար է դառնալու.

ՀԱՅ ՂԻԼ ԻՆՀ ԵՍ ՂԱՌՆԱՐՈՒ:

Շուտասսելուկ.—կարճ-պոչ փողիս, կարճ-պոչ փողիս:



30. *Պոչառ աղւես*

Հինում է չի լինում մի պառաւ։ Ես պառաւն իր էծը կը-
թում է, կաթը վեր է դնում, գնում է ցախ ու փէտ բերի,
որ կրակ անի, կաթն եփի։

Մի աղւէս գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ու-
տում։ Պառաւը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղւէսի
պոչը կտրում։ Պոչատ աղւէսը փախչում է,
գնում է մի բարի վրա կանգնում ու էսպէս
խնդրում.

— Տատիկ, տատիկ, պոչըս տուր, կըցեմ, կըցմըցեմ, գնամ
ընկերներիս հասնեմ, որ ինձ շասե՞ն՝ պոչատ աղւէս, որ-
տեղ էիր:

Պառակն ասում է.

— Դէ զնա իմ կաթը բեր.

Աղւեստ գնում է կովի մօտ:

—կովիկ, կովիկ, կաթ տուր ինձ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, զնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատաղւէս, որտեղ էիր կոմս ատում է:

— Դժ անա ինձ համար խոտ բեր:

Այս էսա պնդեմ է արտի մօտ

—Արտիկ, արտիկ, խոս տուր ինձ, խոտը տանեմ կովին
տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ,

պառաւը պոչըս տայ, կրցեմ, կրցմըցեմ, գնամ ընկերներիս
հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, որտեղ էիր:

Արտն ասում է.

—Դէ գնա ինձ համար ջուր բեր:

Աղւէսը գնում է աղբիւրի մօտ:

—Աղբիւր, աղբիւր, ջուր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ. կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կրցեմ, կրցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, որտեղ էիր:

Աղբիւրն ասում է.

—Դէ գնա կուժ բեր:

Աղւէսը գնում է աղջկայ մօտ:

—Աղջիկ, աղջիկ, կուժը տուր, կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ. կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կրցեմ, կրցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, որտեղ էիր:

Աղջիկն ասում է.

—Դէ գնա ուլունք բեր ինձ համար:

Աղւէսը գնում է չարչու մօտ:

—Չարչի, չարչի, ուլունք տուր, ուլունքը տանեմ աղջրկան տամ, աղջիկը ինձ կուժ տայ, կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ. կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կրցեմ, կրցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, որտեղ էիր:

Չարչին ասում է.

—Դէ գնա ինձ համար ձու բեր:

Աղւէսը գնում է հաւի մօտ:

—Հաւիկ, հաւիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տայ. ուլունքը տանեմ աղջրկան տամ, աղջիկը ինձ կուժ տայ. կուժը տանեմ աղբիւրին տամ. աղբիւրը ինձ ջուր տայ. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ. կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կրցեմ, կրցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, որտեղ էիր:

Հաւն ասում է.

—Դէ գնա ինձ համար կուժ բեր:

Աղւէսը գնում է կալորի մօտ:

—Կալոր, կալոր, կուժ տուր ինձ, կուժը տանեմ հաւին տամ, հաւը ինձ ձու տայ. ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տայ. ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տայ. կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կրցեմ, կրցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, որտեղ էիր:

Կալորի մեղքը գալիս է. մի բուռը կուտ է տալի: Աղւէսը կուտը տանում է հաւին, հաւը ձու է տալի. ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալի. ուլունքը տանում է աղջրկան, աղջիկը կուժ է տալի. կուժը տանում է աղբիւրին, աղբիւրը ջուր է տալի. ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի. խոտը տանում է կովին, կովը կաթն է տալի, կաթը տանում է տալիս պառաւին, պառաւը պոչըս տալիս է իրեն, կրցում է, կրցմըցում է, վազում, գնում, իր ընկերներին հասնում:

31. Անվախ Մարիամը

—Մարիամ, գնա մառանից մի բանի կարտօֆիլ բեր,—կանչեց մայրը խոհանոցից:

Մարիամը յօնքերը կիտեց, դունչը ծռմռեց: Նա չէր սիրում մենակ մառանը գնալ. մկներից վախենում էր:

Բայց չէր ուզում ցոյց տայ թէ վախենում է: Միթէ ամօթ չէր, ութը տարեկան ահագին աղջիկ մկներից վախենայ:

Բանալիները վերցրեց ու գնաց:

Առաջ մի դռանը ոտով ուժեղ զարկեց, իբրև թէ պատահմամբ, յետոյ էլ շըխկշիկալով բանալին անց կացրեց կողպէրի մէջ, որ մկները լսեն ու փախչեն, դուռը աղմուկով բաց արաւ, ձեռի կողովը ներս շպրտեց, բարձր կանչեց—փըշտ, փըշտ, արագ վագեց ներս ու ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս կողովը լցրեց կարտօֆիլով ու դուրս պրծաւ: Վազելով ընկաւ խոհանոց, կողովը դրաւ մայրիկի առջե ու հպարտ-հպարտ ասաւ.

—Բերի, մայրիկ!

Բայց մեր մէջը մնայ՝ մառանի դուռը թողել էր բաց:

- 1) Ի՞նչու էր Մարիամը մառանի դուռը բաց թողել:
- 2) Բացի մկներից, էլի ի՞նչից նն երեխաները զուր վախենում:

32. Կոռունկներ

Կը՛ո կը՛ո, կըռկըռան
կոռունկները հա թռան.

կոռունկների թեփ տակ
եկաւ գարուն մեր դռան:

Առած.—Մարտն անցաւ, դարդն անցաւ:

33. Արագիլների դարձ

Մի զով առաւօտ էր, երբ արագիլը իջաւ գիւղի վրա իր հին բունը: Երեխաները բակում խաղում էին:

—Բարձր, երեխէք, —ձայն տւաւ արագիլը եր բարդու ծայրից:

—Արագիլն եկել է, արագիլն եկել է, —ուրախացան երեխաները:

—Նոր ի՞նչ կայ մեր գիւղում:

—Է՛, ինչ որ դու գնացել ես, այնքան բան է պատահել, —պատախանեց մանուկներից մէկը: —Այնպէս ցուրտ էր, այնպէս ձմեռ: Դու գլուխդ լաւ պրծացրիր:

—Ավանս այստեղ չէիր, քրոջս մարդու տւինք, —շտապով յայտնեց միւսը: —Հարսանիք արինք, քէփ արինք:

—Ինձ համար հայրիկս նոր-Տարուն կրունկով կօշիկներ առաւ, —ցոյց տւաւ իր կօշիկները մէկ ուրիշը:

—Իսկ ես արդէն դպրոց եմ գնում: —սկսեց մի փոքրիկ աղջիկ:

—Զէ՞ որ արագիլը
դեռ այստեղ էր, որ
քեզ դպրոց տա-
րանք, —կտրեց նրա
խօսքը մեծ եղբայ-
րը: —Ո՞նց էիր լաց
լինում, չէիր գնում:

—Ե՞ս... Ե՞ս...—
կմկմաց աղջիկը: Ու
նորից գարձաւ ա-
րագիլին.

—Բայց հիմա ես արդէն ազատ կարդում եմ:

Արագիլը բարդու ծայրից ծանր-ծանր գլուխը ժաժ տւաւ:

—Լաւ, լաւ, շատ լաւ ես անում:

- 1) Փոքրիկ աղջիկը առաջ ի՞նչու չէր ուզում գնայ դպրոց եւ հիմի ի՞նչի է ուրախ:

- 2) Դու ինչ նորութիւն կը յայտնէիր արագիլին:

- 3) Ղերեւի պատկերում արագիլները ոք ժամանակն են նկարսած:



34. Գարնան ամիսներ

Մարտը տալիս է ձնծաղիկ,
ապրիլը կապոյտ մանուշակ,
մայիսին բացւում է վարդը,
սովորակը երգում անուշակ:

35. Խելօք հաշիւ

Մի աղքատ տղայ կանգնել էր փռան առջև ու ախորժակով նայում էր տաբ-տաք բլիթներին:

Մտնում է ներս ու հարցնում.

—Ի՞նչ արժ է բլիթը?

—Վեցը հինգ կոպէկ.

—Վեցը հինգ կոպէկ, հա. ուրեմն հինգը չորս կոպէկ, չորսն էլ երեք կոպէկ, երեքը երկու, երկուսը մէկ, իսկ մէկը անփող։ Մէկը ինձ հերիք է. տւէք ինձ մէկը։

1) Տղան ըլիթը ստացաւ։

2) Ծիշտ էր նրա հաշիւ։

36. Մեղու

Ահա ծագեց արեգակը,
ահա ծաղկեց մանիշակը,
մեղուն թողեց իր փեթակը
տըզտըզալով, տըզտըզալով։

Մեղուն թուաւ ծաղիկներին,
մեղըր բերաւ փոքրիկներին,
կըճ ու խայթոցն էլ չարերին,
կըսկըծալով, կըսկըծալով։



37. Բնի մէջ

Մի ծառ:


Դաշտում մի ծառ:

Դաշտում մի կանաչ ծառ:

Մի բուն:

Ծառի վրա մի բուն:

Դաշտում ծառի վրա մի բուն։



Չորս ձու:

Չորս կապտաւուն ձու:

Բնի մէջ չորս կապտաւուն ձու:

Դաշտում ծառի վրա էն բնի մէջ չորս կապտաւուն ձու:



Մի թոչուն:

Մի մարիկ թոչուն:

Չորս կապտաւուն ձւի վրա մի մարիկ թոչուն:

Դաշտում կանաչ ծառի վրա էն բնի մէջ թուխս է նստել մի մարիկ թոչուն։



Ճուտիկներ:

Փոքրիկ ճուտիկներ:

Էն բնի մէջ չորս ճուտիկներ:

Դաշտում կանաչ ծառի վրա էն բնի մէջ ծրւծրւում են չորս փոքրիկ ճուտիկներ։

Թոփի, մարիկ, թոփի,

Փոքրիկները ուտել են ուզում։




Ուրիշ ենչ կենդանի գիտես, որ ձից է դուրս գալիս։

38. Ապաստակի քացին

Մեր տան առաջ պարտէզ կայ,
պարտէզի մէջ մի ծառ կայ,
ծառի վրա մի բուն կայ,
բընի մէջը մի ձու կայ,
ձրւի մէջը նապաստակ.
փախի, թէ չէ քացի կըտայ:

Առած. — Աստւած ազառի նապաստակի քացուց:
Շուտասելուկ. — «Փոկակապ Ակոփ ապի, ինձ համար մի
փոկ կապի, քեզ ասեմ՝ փոկակապ Ակոփ ապի»:



39. Ո՞վ է մեղատորը

Սարդը կախ էր արել իր բարակ
թելը ծառի ճիւղից ու վայր իջել։
Ճուտիկը, Մուտիկը և ճիւլտու-
րիկը, Զալ հաւիկի գիծ վառիկները,
նրան տեսան։
— Ի՞ն է, — ճւաց ճուտիկը։
— Չէ, ին է, — ճշաց Մուտիկը։
— Չէ, ին է, իմը, — ճըկճըկաց ճը-
խլտուրիկը։
Ու երեքն էլ իսկոյն վազեցին,
որ սարդը բոնեն և ուտեն։
Ճուտիկը վազեց՝ անփետուր թե-
րը թափ տալով։
Մուտիկը վազեց՝ բարակ վիզը ճիկ տալով։
Ճիւլտուրիկը վազեց՝ իր վասաւած կարմիր ոտը կաղէ-
կաղ քաշ տալով։
— Հեռացէք, ին է, — վրա պրծաւ ճուտիկը։
— Կորէք, ին է, — հրեց Մուտիկը։
— Չեզ ով է տալիս, — բոթեց ճիւլտուրիկը։

Իրար այնքան բոթեցին, հրեցին, որ սարդը էլ չըպասեց
ու իր թելովը վեր փախաւ։
Վեր փախաւ ու վերեկից նայում էր թէ ինչպէս էին կըռ-
ւում փոքրիկները ու իրար կտցահարում։
— Հիմի էս ի՞նչ արիք, — ճշում էր ճուտիկը։
— Դուք վախեցրիք, — ծուռմ էր Մուտիկը։
— Իմ սարդը ի՞նչու փախցրիք, — լաց էր լինում ճիւլտու-
րիկը։

Երեքից ով էր մեղատորը։

Առածներ. — 1) Շները իրար հետ կուեցին, ճամփորդիքանը աջողեց։
2) Հաւը երազում կուտ կը տեսնի։

40. Ծիտիկի օրօրքը



Կախւած է ճիւղից
ճօճը ծիտիկի։
Փըչի հովիկ, Փըչի,
ճօճն օրօրւի, տանի-
բերի։
Նանի, ծիտիկ, նանի։

Ծիտիկը անուշ երազ է տեսնում։
Փըչի, հովիկ, Փըչի,
ճօճն օրօրւի, տանի-բերի։
Նանի, ծիտիկ, նանի։

Բայց տես, ծիտիկը բընից չըզարթնի։
կամաց փըչի, կամաց,
ճօճն էլ զգուշ տանի-բերի։
Նանի, ծիտիկ նանի։

41. Ծիտը

1.

Ղինում է չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դէս է թռչում, դէն է թռչում, տեսնում է՝ մի պառաւ փէտի է ման գալի, ուզում է թռնիր վառի, հաց թիսի: Գնում է ասում:

—Նանի ջան, նանի, ոտիս փուշը հանի, թռնիրդ վառի, և էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառաւը փուշը հանում է, թռնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի թէ՛ իմ փուշը ետ տուր ինձ, Պառաւն ասում է.—Փուշը թռնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է թէ՛

—Իմ փուշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, լօշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառաւը մի լօշ է տալի: Ծիտը լօշն առնում է թռչում:

2.

Գնում է տեսնում՝ մի հովիւ անհաց կաթն է ուտում: Ասում է:

—Հովիւ ախպէր, կաթն ի՞նչու ևս անհաց ուտում: Ա՛յ, լօշը առ, կաթնի մէջ բրդի՛, կեր. ևս էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի թէ լօշս տուր:

Հովիւն ասում է.—Կերայ:

—Չէ, ասում է, իմ լօշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, գառնիկդ առնեմ դուրս թռչեմ:

Հովիւը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում:

3.

Գնում է տեսնում մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն:

Ասում է.—Ի՞նչ էք մոլորել: Ա՛յ, իմ գառն առէք, մորթեցէք, քէֆ արէք: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի թէ՛ իմ գառը տւէք:

Ասում են.—Մորթել ենք, կերել, որտեղից տանք:

Սա կանգնում է թէ՛ չէ, իմ գառը տալիս էք տւէք, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, հարսին առնեմ, դուրս թռչեմ: Ու հարսին առնում է թռչում:

4.

Գնում է, գնում, գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է.—Աշուղ ախպէր, առ էս հարսին, պահի՛ քեզ մօտ: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, աշուղի առաջը կտրում թէ՛ իմ հարսն ինձ տուր:

Աշուղը ասում է.—Հարսը գնաց իրենց տուն:

Սա թէ՛ չէ, իմ հարսը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, սազիկդ առնեմ դուրս թռչեմ:

Աշուղը սազը տալիս է իրեն:

Սազն առնում է, ուսը գցում, թռչում մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճըտըտալով երգել:



Ծընգլը, մընգլը,
փուշիկ տւի, լօշիկ առայ,
լօշիկ տւի, գառնիկ առայ,
գառնիկ տւի հարսիկ առայ,
հարսիկ տւի, սազիկ առայ,
սազիկ առայ, աշուղ դառայ,
ծընգլը, մընգլը,
ծիւ, ծիւ:

Ծիտիկը ի՞նչո՞ւ սազը իրեն պահեց:

Հանելուկ.—Ալալա, բալալա, բեր խաղ արա, տար կախ արա:

Շուտասելուկ.—«Քեռի, էլի էն լաւ ալրէն առ:

Էն լաւ ալրէն էլի առ, քեռի»:

42. Ծիս

Հուռին գնաց բանջարի,
բանջար չեղաւ՝ խոտ եղաւ,
խոտի տակին ծիտ եղաւ,
ծըլւըլալէն դուրս թուաւ:
Ծիտը թուաւ գերանին,
կանաչ խոտը բերանին:

43. Գիծ քամին

Փոթորիկ պապը մի գիծ
տղայ ունի, անունը Քամին:
Խսկի չի կարողանում հանգիստ
նստի, միշտ մի անկարգութիւն
պիտի անի:

Մին էլ տեսար մէկի գըլ-
խարկը թոցրեց զիխից, միւսի
հովանոցը շուռ տւաւ ու ին-
քը մըւշըւալով փախաւ գնաց:
Գնաց յարձակւեց տան-
տիկնոջ փուած լւացքի վրա.
շապիկը շպրտեց գցեց հարե-
ւանի բակը, թաշկինակը հա-
նեց կտուրը ու ինքը ընկաւ փողոցները:


Փողոցների փոշին հաւաքեց, վեր կալաւ լցրեց անցնող-
ների աչքն ու բերանը, ինքը, վը զզ, թողեց կորաւ:

Ի՞նչ կորաւ: Մին էլ ահա ներս ընկաւ բաց լուսամուտից,
փչեց, հանգցրեց ճրագը, քեզ թողեց մթնումը ու սուլելով,
ծիծաղելով վառարանի ծակից դուրս փախաւ:

Գիծ է, գիծ:

Էլ ուրիշ ի՞նչ գժութիւններ է անում քամին:

Հանելուկ.—Ոտները կրակում, գլուխը երկնքում:



44. Քամին

—Ու-ու-ու...
Քամին է, քամին,
տես անզգամին.

բերան չունի՝ փըչում է,
թէեր չունի՝ թըչում է,
ձեռքեր չունի՝ քաշում է,
իմ փոքրիկին՝ քըշում է:
Կորի, դու քամի,
անզիտան քամի:
Մի՛ վախի, ջանիկ,
փէշը պինդ պահի,
ես թող չեմ անի,
քամին քեզ տանի:



45. Ժամացոյց

—Չըխկ-չըխկ, չըխկ-չըխկ,—հանգարտ ու միակերպ
գնում գալիս է ժամացոյցի ճօճանակը:

—Վեր կաց, վեր կաց, Գուրգէն, արդէն եօթը խփել է,—
զարթեցնում է մայրիկը տղին:

—Թող մի ըիշ էլ ընեմ,—խնդրում է Գուրգէնը ձըգձըգւե-
լով:—Մեր ժամացոյցը առաջ է վազում:

—Ոչ-ոչ, ոչ-ոչ,—պատասխանում է ժամացոյցը պատից:

* *

Գուրգէնը գալիս է դպրոցից, վերարկուն հանում է,
գլխարկը դէն շպրտում:

—Ե-կար, ե-կար,—ողջունում է նրան ժամացոյցը:

—Ուժ, դեռ մէկը չը կայ, իսկ հայրիկը միշտ երկուսին
է զալիս:

Ու Գարգէնը կանգնում է ժամացոյցի առջև, ոտքը գետ-
նին է զարկում ու կանչում.

—Ի՞նչ դանդաղ ես բանում, ժամացոյց: Մի քիչ շուտ. ես
շատ եմ սոված,

—Ես-չէ, ես-չէ, —ծաղրում է նրան ժամացոյցը, իր եր-
կար ճօճանակը հանգիստ աջ ու ձախ շարժելով:

Թէյը վաղուց հաւաքել են: Դուրսը վաղուց մթնել է:
Գուրգէնը նոր է նստել դասերը սերտելու:
Իսկ ժամացոյցը ահագին աշքը չոել՝ նայում է ու կրկնում.
—Այ-այ-այ-այ:

1) Ի՞նչպիսի տղայ էր Գուրգէնը:

2) Ժամացոյցը ե՞րբ է քնում:

Առած.—Այսօրւայ գործը վաղւան մի թողնի:

46. Արտուրիկ



Արտուրիկ,
նախշուն տոտիկ,
իջնեն կալեր
գողտիկ-մողտիկ,
ընտրեն քարեր,
ուտեն կուտիկ,
կըծւըլան
կըթիկ-կըթիկ.

Արտուրիկը ամենից քաղաք ե՞րբ է երգում:

47. Ուր կորաւ

Փոքրիկ Վաչիկը սենեակում մենակ էր: Տեսաւ սեղանի
վրա շորի խոզանակը: Աթոռը
քաշեց սեղանի առջև, բարձրա-
ցաւ, խոզանակը վերցրեց, ուզում
էր իջնի, մին էլ յանկարծ ի՞նչ
տեսաւ:

Մի սիրուն, գանգուր տղայ,
կարծես միւս սենեակից, նայում
է իրեն:

—Վահ, էս որտեղից եկաւ:

Վաչիկը զարմացած մի քիչ
մտիկ տւաւ ու ժպտաց:

Տղան էլ էնտեղից ժպտաց:

Էս շատ գուր եկաւ Վաչիկին
ու կանչեց.

—Արի, խաղ անենք. ես էնպէս լաւ ձի ունեմ:

Տղան էլ էնտեղից ձեռքով արաւ ու մի բան ասաւ, բայց
էնպէս ցած, որ Վաչիկը բան չը հասկացաւ:

—Ի՞նչ ես ասում. ե՞ս գամ: Զէ, ես քեզ մօտ չեմ ուզում.
դու արի էստեղ: —Ասաւ ու գլուխը թափ տւաւ:

Նա էլ էնտեղից գլուխը թափ տւաւ:

Էս մինը Վաչիկին դուր չեկաւ: Քիթ ու մոռւթը հաւա-
քեց ու բռունցը ցոյց տւաւ:

Նա էլ էնտեղից ցոյց տւաւ իր բռունցը:

Վաչիկը բարկացաւ ու հանեց լեզուն:

Իսկոյն տղան էլ հանեց լեզուն:

Վաչիկը կատաղեց, խոզանակն առաւ ու մէկ էլ շրը՝ խկ.
պատից կախած հայելին կտոր կտոր եղաւ, թափւեց գետին:

Մայրիկը ձայնից ներս վազեց սենեակը, իսկ Վաչիկը ապ-
շած մնացել էր ամոռի վրա ու նայում էր թէ էս մւր կորաւ
էն սատանայ տղան:

Էլ ի՞նչի մէջ մարդ կարող է տեսնել իր պատկերը:

48. Կ ի թ

— Ասա, տեսնեմ, մեր գիւղում
կովերն ի՞նչպէս են կթում:
— Ահա այսպէս են կթում.
ծիծը խլում հորթուկից,
հորթը կապում մօր ծնկից,
կովկիթն իրենց գոզն առնում,
կովի կողքին կըկըզում.
փը՛ շշ - բը՛ ժժ,
փը՛ շշ - բը՛ ժժ:

- 1) Ուրիշ ո՞ր կենդանիներին են կթում:
- 2) Կաթը ի՞նչու են կթում:
- 3) Ինչո՞ւ են կթելիս հորթը կովի ծնկից կապում:



49. Սահակի երգը

Շուշիկը հիւանդացել էք: Նրան
մանկանոցից հեռացրին ու պառկե-
ցրին ընդարձակ դահլիճում, մայրի-
կի ննջարանի կողքին:

Այդ օրւանից նրա եղբայր Սահակը
մանկանոցում հէնց որ անկողին էր մտնում, սկսում էր բարձր
ձայնով երգել: Ամեն երեկոյ, մէկը միւսի ետևից, երգում էր
իր գիտեցած բոլոր երգերը:

Մի իրիկուն էլ, երբ սկսեց երգել, մայրիկը մտաւ նրա
սենեակը ու ասաւ.

— Սուս կաց, հերիք է ինչ երգեցիր. քնի:

— Բայց չէ որ Շուշիկը դեռ քնած չի, մայրիկ, — պա-
տասխանեց Սահակը.

— Ի՞նչ անենք որ քնած չի:
— Ես երգում եմ, մայրիկ ջան, մինչև որ Շուշիկը քնի:
Նա էնտեղ մենակ վախենում է:
— Դէ լաւ, լաւ, երգի. Ես չէի իմանում, հոգիս: Երգի,
մինչև Շուշիկը քնի:

50. Ոնց են հարում խնոցին



Թոկը ծառից կապեցին,
հաստ խնոցին կախեցին,
երկու ծայրից բռնեցին,
տարան բերին շարժեցին,
թըլըխկ-չըլխկ,
չըլըխկ-թըլըխկ,
ահա այսպէս հարեցին,
դեղին կարագ հանեցին:

- 1) Կարագը ի՞նչից հանեցին:
- 2) Կարագը հանելուց յետոյ՝ խնոցում ի՞նչ մնաց:
- 3) Չեզ մօտ էլ այսպէս են խնոցի հարում:

51. Խնոցի


Հարի, հարի, խնոցի,
մէջըդ բարի խնոցի,
ունկըդ բարակ, խնոցի,
մէջըդ կարագ, խնոցի:



52. Քեռին մեռել է

Գորտը գորտին կանչում է:
— Քեռին մեռել է, քեռին մեռել է:
— Ե՞րբ, Ե՞րբ, Ե՞րբ:
— Մէ-կէ-կէլօրը, մէ-կէ-կէլօրը:
— Ղորթ, ղորթ, ղորթ:

53. Ճանձերի զրոյցը



Իրիկունը ճանձերը հաւաք-
ւել էին առաստաղին ու զբոյց
էին անում:


—Տը՝ զզ, տը՝ զզ, ինչ լաւ կի՞ն
է Սօֆիա մայրիկը, —ասում. էր
մի ճանճ շաքարոտ ոտները լի-
գելով: —Ամբողջ օրը չարչարւում

է մեզ համար: Թէյի ժամանակ լիք շաքարամանը բերում է
դնում մէջտեղը: Մեղ համար անուշ է պատրաստում, կան-
ֆէտ է հանում, բոլորը մեզ համար:

—Տը՝ զզ, —մէջ մտաւ մի ուրիշը: —Այն օրն էլ երե-
խաները մեր խաղողը ուտում էին, եկաւ խլեց, դրաւ պահա-
րանի գլխին որ մենք ուտենք:

—Իսկ այն արջի նման մարդը, որ հայրիկ են ասում, —
դարձեալ սկսեց առաջինը, —ինչ անպիտան մարդ է: Մի տե-
սակ բան է ծխում, ծխով տունը լցնում է, թիչ է մնում խեղղը-
ւես: Առջեն էլ փոքրիկ ամանով մի բան է դրել, որ ինքը
թանաք է ասում: Այն օրը
փորձեցի, համը տեսայ. թու,
այնպէս դառն էր. թիչ մնաց՝
մէջն էլ խեղղեկի: Շատ ան-
պիտան մարդ է, շատ:

—Օֆ, —հառաչեցին բոլոր
ճանձերը միասին, —ափսոս չի
Սօֆիա մայրիկը:



1) Սօֆիա մայրիկն էլ սիրում էր ճանձերին:

2) Հապա ինչու էր այնպէս հոգ քաշում ճանձերի համար:

Առած. —Էշն ընկաւ գարու հորը:

Առած՝ էս լաւ է քանց իմ ախոռը:

54. Կատու

Կատուն եկաւ փիսիկ-փիսիկ,
հազար նազով, ինչպէս հարսիկ.
գունչը սրբեց թաթիկներով,
մազը սանրեց չանչիկներով:
Կատու, կատու, էր ես տըտում.
թէ մկներն են այսօր արթուն:

55. ***

Փոքրիկ Արտաշէսը շը-
շըւացնելով գնում էր ձորով:
Յանկարծ լսեց, որ մի ուրիշն
էլ է շւացնում: Հէնց իմա-
ցաւ ընկերն է, կանգնեց,
ձայն տւաւ.

—Վահան, դու ես:

—Ես...

—Ատա, մեր հորթը նոր
գնաց. տեսան:

—Անր...

—Հանաբը ես անում, ինչ է:

—Զէ...

—Վայ, էտ հօ դէլը կհւածի:

—Ուտիշ...

Արտաշէսը լալով վազեց տուն. տեսաւ՝ հորթն էլ է տանը,
վահանն էլ:

1) Հապա նվ էր Արտաշէսին պատասխան տուղը:

2) Ի՞նչ դնենք այս պատմովեան վեղնազերը.

Առածներ.—1) Դատարկ կարասը մեծ ձայն կը տայ:

2) Կարասումը ինչ ձայն տաս՝ էն կը լսես:





56. Ծտի զարմանքը

Քեռի Խէչանի այգում խաղողը հասել էր: Թըռ-
չունները մէջը քէֆ էին անում, մանաւանդ մի
փոքրիկ ծիտ: Նա ծնւել էր հէնց այդ այգում, մի սալորենու երկու
ձիւղի արանքում: Ամբողջ օրը թոշում էր ողկոյզից ողկոյզ,
այստեղ մի հատիկ, այնտեղ մի հատիկ, անուշ էր անում ու
երգում: Մի օր էլ տեսաւ՝ գիւղացիք քթոցներով թափւել են
այգին: Հեռացաւ, թառ եղաւ մի ծառի ու խէթ-խէթ նայում
էր այստեղից: Տեսաւ որ գիւղացիք դանակներով կտրատում
են ողկոյզները, քթոցներն ածում, շալակում տանում:

—Էս ինչ անաստած բան է. ի՞նչ են ա-
նում էս մարդիկը իմ այգում, ուր են տանում
իմ խաղողը, — զարմացած մտածում էր նա և չէր
կարողանում հասկանալ:



- 1) Ո՞ւ էին տանում խաղողը:
- 2) Էս ամենը տարսայ ո՞ր եղանակին էր:
- 3) Խաղողից ի՞նչ են պատրաստում:
- 4) Խաղողի հետ միասին էլ որից ի՞նչ
պտուղներ են հասնում:

Առած. — Ծառը քանի պտուղ շատ
ունենայ, գլուխը բաշ կը դցի:



Ցանկ

ԱՅԲԵՆԱՐԱՆ

1. Մուկն ու մանուկը 12
2. Արբամիտ Սուրէնը 13
3. Պըստիկ նապաստակը 14
4. *Օրօր 16
5. Արագիլն ու գորտը 17
6. Պարոն գրդակը 18
7. Տերենները ընկնում են 19
8. Խոսրովի նըկարը 20
9. *Բաղիկ 21
10. Արրտոտ որսկանը 22
11. Աշուն 24
12. Անկարդ Պողոսը 26
13. Զար-Եղօն և իր եղբայրը 29
14. Պետիկի վերջակէտը 31
15. Բակի զինուորները 33
16. Հնարագէտ Համօն 34
16. Էս սեղանն ու էն սեղանը 36
18. Անքուն դեկի հեքիաթը 38

ՀՆԹԵՐՑԱՐԱՆ


1. *Լուսաբացին 45
2. Ծտի գուլպաները 46
3. *Լուսացաւ, ժողովրդ-ից 46

4. *Առաջին ձիւնը 46
5. Ուլիկը 47
6. Աշխարհի կործանումը 49
7. *Բաղիկը, Գ. Քաթիպա 52
8. Օգուռթիւն 52
9. *Շունը 53
10. Երկու հարևան 53
11. Իրիկուն 55
- *Այննն իր տուն 56
12. Մարգօի հարստութիւնը 55
13. Զեռքի մատները, ժողով. 57
14. Արդէն աշակերտ է 58
15. *Կրիչ 58
16. Արկ և լուսին 59
17. *Մկան տունը 60
18. Զալ հաւի պատմութիւնը 61
19. Անկոչ հիւրեր 63
20. *Փիսիկի գանգատը 64
21. Խելօք երեխաներ 64
22. Էս էն է 67
23. Խոհանոցում 70
24. Դժւար հանելուկ 71
25. *Ծոյլ աղջիկը, ժողովրդ. 72
26. Ծոյլ տղան, ժողովրդ. 72
27. Պատիկ պատմութիւն 72
28. *Կձուճը, ժողովրդ 73

29.	Նկարիչն ու մեքենավարը	74
30.	Պոչատ աղւէսը	75
31.	Անվախ Մարիամը	78
32.	*Կռունկներ, ժողովրդ.	78
33.	Արագիլների գարձը	78
34.	*Գարնան ամիսները	80
35.	Խելօք հաշիւ	80
36.	*Մեղու, ըստ Գ.-Ք.	80
37.	Բնի մէջ	81
38.	*Նապաստակի քացին	82
39.	Ո՞վ է մեղաւորը	82
40.	*Ծտի օրօրքը	83
41.	Ծիտը	84
42.	*Ծիտ, ժողովրդ.	86
43.	Գիտ քամին	86
44.	*Քամի	87
45.	Ժամացոյց	87
46.	*Արտուտիկ, ժողովրդ.	88
47.	Ուր կորաւ	89
48.	*Կիթ, Ա. Արարատեանի	90
49.	Սահակի երգը	90
50.	*Ոնց են հար. խնոցին Ա.Ա.	91
51.	*Խնոցի, ժողովրդ.	91
52.	*Քեռին մեռել է, ժողով.	91
53.	Ճանձերի զրոյցը	92
54.	*Կատու Գ. Ք.	93
55.	Արձադանք	93
56.	Ծտի զարմանքը	94

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1.	Անտառ	35
2.	Մատ, մատանի	57
3.	Անկողին	58
4.	Գիշեր	60
5.	Գետ	66
6.	Կամուրջ	66
7.	Սամովար	71
8.	Ճրագ	71
9.	Միլեր	72
10.	Ստւեր	73
11.	Սաղ	85
12.	Ծուխ	86



3667



H A P M.
H 4-256

D



■ Լ Օ Ւ Ս Բ Ե Ր ■

1
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Գինն է 45 կ.

Կազմողների հասցեն՝ Տիֆլիս Բեբուտովսкая 25.



H Apm.
4-2569
Hill